

ԱՎՆԱՐԿ

ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐ
ԵՒ ՏԱՐԱՐՆՈՅԹ
ՎԵՐԱԳՐՈՒՄՆԵՐ

15 ռազմագերիներու վերադարձի գործընթացի կայացման տարաբնոյթ վերագրումներ կը կատարւին: Ընդհանուր առումով կայ երկու ուղղութիւն: Առաջին ուղղութիւնը գործընթացի իրականացման մէջ հիմնական դերակատարութիւն կը վերապահէ Վրաստան-Միացեալ Նահանգներ-Եւրոպական Միութիւն համակարգուած միջնորդութեան, մինչ միւս ուղղութիւնը՝ բացառապէս Մոսկուային:

Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնակատարը առաջին ուղղութեան բանաձեւումը կը կատարէ, երբ կը յայտարարէ, որ «Երկու օր առաջ ես հանդիպում ունեցայ Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարարի տեղակալի հետ, ով ասաց, որ Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարար Էնթընի Պլինքընի յանձնարարութեամբ ունի առաքելութիւն այս օրերի ընթացքում ինչ-որ մի ճեղքում ապահովել գերիների վերադարձի հարցում: Ես ընականաբար ասացի, որ մենք պատրաստ ենք: Ահա այսօր՝ գործադրուած ջանքերի, այդ թւում՝ Վրաստանի վարչապետի, վրաց մեր եղբայրների, Եւրոպական Միութեան մեր գործընկերների ջանքերի արդիւնքում, մեր եղբայրները եկան Հայաստան»:

Վարչապետի պաշտօնակատարին եւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարին յայտարարութիւնները համահունչ գիծեր կը ներառեն. Էնթընի Պլինքըն կը յայտարարէր, որ

«Մենք Նաեւ ողջունում ենք Հայաստանի որոշումը Ազրայեճանին տրամադրել կարելուր տեղեկատուութիւն, որը կ'օգնի մարդասիրական ականագերծման աշխատանքներին ու թոյլ կը տայ խուսափել հետագայ դժբախտ պատահարներից: Մենք երախտապարտ ենք վարչապետ Իրաքլի Ղարիպաշվիլուն ու Վրաստանի կառավարութեանը՝ այս քայլերին օգնելու հարցում ունեցած էական դերակատարման համար, որը տարածաշրջանի ժողովրդին աւելի եւ մօտեցնում խաղաղ ու բարեկեցիկ ապագային, որին նրանք արժանի են»:

Վրաստանի դերակատարութիւնը շեշտակիօրէն ընդգծուած է Ռաշիսկընի կողմէ հրապարակուած արժեւորումին մէջ: Պլինքըն միայն ռազմագերիներու վերադարձով չի պայմանաւորեր Թիֆլիսի դէրը. ըստ անոր, Թիֆլիսին վերապահուած է Երեւան-Պաքու բնականոն յարաբերութիւններու հաստատման գործընթացին մէջ միջնորդական առաքելութիւն իրականացնելու դէր: Թիֆլիսին տրուող տարածաշրջանային դէրը անշուշտ ամերիկեան ներշնչումներ ունի եւ ուղղակի կը հակադրուի Մոսկուային, նուազ չափով՝ Անգարային:

Պաշտօնական Երեւանի յայտարարութիւնը փոխլրացուցիչ բաղադրիչ կը պարփակէ: Այս առիթով երախտագիտութիւն կը յայտնուէր Միացեալ Նահանգներուն ու Վրաստանին, Միւսքի խմբակի համանախագահներ Ռուսիոյ ու Ֆրանսայի նախագահներուն եւ Եւրոպական Միութեան:

Անցնիք սակայն երկրորդ ուղղութեան: Ակներեւօրէն զուսպ է Մոսկուայի արձագանգը: Արտաքին գործոց նախարարութեան բանքերը կը յայտարարէր, որ Մոսկուան կ'ողջունէ ազրայեճանական կողմէն 15 հայ զինծառայողի փոխանցումը Երեւանին՝ ականապատուած դաշտերու քարտէսին դիմաց: «Երկար սպասուած եւ հիանալի նորութիւն»: Կ'եզրափակել Մարիա Չախարովան:

Այստեղ ընդհանրապէս ո'չ Եւրոպական Միութիւն, ո'չ Թիֆլիս, ո'չ ալ Միացեալ Նահանգներ նշուած են. չէ նշուած Նոյնիսկ Մոսկուայի դերին մասին:

Մոսկուայի դերին մասին նշելու պարտականութիւնը ստանձնած է ռազմագերի յանձնած կողմը: Յետաքրքրական է, որ Ազրայեճանի արտաքին գործոց նախարարութիւնը բացառապէս Մոսկուային կը վերապահէ յանձնումի գործընթացի իրականացման միակ դերակատարի հանգամանքը:

Այսպէս.

«Ռազմագերիները վերադարձուել են բացառապէս զօրավար Մուրատովի եւ ռուսական կողմի վճռորոշ ջանքերով եւ դերակատարութեամբ:

2021 թուականի յունիսի 12-ին Ազրայեճանը Հայաստանին է վերադարձրել 15 գերեզարուած հայերի՝ Հայաստանի կողմից դրա դիմաց ստանալով Աղտամի ականապատ դաշտերի քարտէսները:

Փոխանակումն անցկացուել է ազրայեճանա-վրացական սահմանին՝ Վրաստանի ներկայացուցիչների մասնակցութեամբ»:

Թիֆլիսի մասին նշումը աննշան է: Փոխանակման իբրեւ վայր կը յիշուի Ազրայեճան-Վրաստան սահմանը: Մոսկուայի դերակատարութիւնը կը բնութագրուի իբրեւ բացառիկ եւ վճռորոշ:

Ռազմագերիներ յանձնող կողմը գործընթացի իրականացումը կը վերագրէ Մոսկուային, մինչ ստացող կողմը՝ Միացեալ Նահանգներուն, Եւրոպական Միութեան եւ Վրաստանին:

Տարաբնոյթ այս վերագրումները բացատրողական եւ տարածաշրջանին մէջ իրականացուող աշխարհաքաղաքականութեան տեսակետէն: Դժուար է եզրակացնելը, որ հայկական կողմի բազմաիասցէ վերագրումներն ու Մոսկուայի շրջանցումը այդ բոլորին մէջ որքանո՞վ պիտի նպաստէ ռազմագերիներու յանձնումի ընդհանուր գործընթացին. նաեւ՝ ընդհանրապէս հետագայ գործընթացներուն:

«Ա.»

ՀԱՐԻՐԻ «ՔՈԼՈՐ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ ԱՌԿԱՅ ԵՆ, ԵՒ ՊԸՐՐԻԻ ՀԵՏ ՀԱՄԱԳԻԵԼԷ ԱՌԱՋ ԱՌԱՆՁԻՆ ՈՉ ՄԷԿ ՈՐՈՇՈՒՄ ՊԵՏԻ ՏԱՄ»

Նշանակուած վարչապետ Սաատ Հարիրի շաբաթ, 12 յունիս 2021-ին, կէսօրին այցելեց Տար Ֆաթուա՝ մասնակցելու համար Իսլամ հոգեւորականներու գերագոյն խորհուրդի նիստին:

Հարիրի դիմաւորուեցաւ հանրապետութեան միւֆթի շէյխ Ապտել Լաթիֆ Տըրիանի կողմէ: Նախքան խորհուրդի նիստին գումարումը, Հարիրի եւ միւֆթի Տըրիան ունեցան ղռնփակ հանդիպում մը, որուն ընթացքին ընկարկուեցան երկրին քաղաքական բեմը յուզող հարցերը, յատկապէս կառավարութեան կազմութեան թղթածրարը:

Ապա Հարիրի մասնակցեցաւ Իսլամ հոգեւորականներու գերագոյն խորհուրդի նիստին, որմէ ետք Տար Ֆաթուայէն յայտարարեց, որ ինք խոր-



հուրդին եւ հանրապետութեան միւֆթիին ներկայացուցած է Նախորդ եօթը ամիսներուն ընթացքին իր դիմագրւած դժուարութիւնները՝ կառավարութեան կազմութեան ջանքերուն շրջագիծին մէջ:

Շաբ.ը՝ էջ 5

«ԱՂԴԱԿ»-ԻՆ ՏՈՒՄԸ ՀԱՐՑԱՂՈՅՑԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ ՅԱԿՈՐ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՐԵԱՆ ՀԱՍՏԱՏԵՑ.

«ՊԷՏՔ Է ՉԵՐԲԵԱՅՈՒՆԻԼ ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹԵՆԷՆ, ՈՐՈՒՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՊՐԵՅԱԻ ԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱԳՈՅՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԷՆԷՆ ԱՂԷՏԱԼԻ ԷՋԵՐԸ ԿՈՐՄԵՅՆԵԼՈՎ ԱՐՅԱԼԻ ՄԵԾ ՄԱՍԸ»

«ՉԵՐՔ ԿՐԱՐ ԱՏՈՐԱԳՆԱՀԱՏԵԼ ԴԵՐԸ ԼԻԲԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ, ՈՐ ԹԷԷՒ ՏԱԳՆԱՊԱՀԱՐ Է, ՄԱԿԱՅՆ ԿԸ ՊԱՀԷ ԿԵԴՐՈՆԱԿԱՐ ԴԵՐԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՉ ՄԵԱՅՆ ՍՓԻՒՌՔԵԱՆ, ԱՅԼ ՆԱԷՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՌՈՒՄՈՎ»

Հայաստանի մէջ տիրող նախընտրական կացութիւնը, Արցախի ներկայ կարգավիճակը, լիբանանահայութեան ապրած տագնապը եւ այս բոլորին մէջ Դաշնակցութեան ունեցած դերակատարութիւնն ու տարածաշխատանքը հանդիսացան ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի հետ «Ազդակ»-ի կատարած հարցազրոյցին առաջըը: Ան հաստատեց, որ Դաշնակցութեան համար անընդունելի է, որ պարտուած, հայութեան մեծ կորուստ պատճառած ու իր Էութենէն պարպուած ղեկավարութիւն մը տակաւին ամէն գնով յամառի կառչի իշխանութեան, երբ ինք յստակօրէն պատասխանատուն է այս մեծագոյն աղէտին՝ անլցնելով, որ ներկայիս «Հայաստան» դաշինքը կը ներկայացնէ լաւագոյն այլընտրանքը՝ հայութեան ու Հայաստանի ծառայող իր ծրագիրով: Բիւրոյի ներկայացուցիչը նաեւ լուսարձակի տակ առաւ Արցախին եւ անոր վերականգնման եւ կայունացման ծրագիրներուն կառչած մնալու հրամայականը, նաեւ շեշտեց սփիւռքեան եւ համահայկական առումով լիբանանահայութեան ունեցած կղերականական ու կարելուր դերակատարութիւնը՝ նշելով, թէ Դաշնակցութիւնը այս առումով իր ուժերը լարած է ու պի-



տի փորձէ կարելին ընել օժանդակելու գաղութին, որպէսզի ծաղկի ու ազդեցութիւնը բազմապատկուի: Ստորեւ՝ հարցազրոյցին ամբողջութիւնը:

«ԱՂԴԱԿ».- Բնականաբար մեր հարցազրոյցը պիտի սկսինք Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանական արտակարգ ընտրութիւններով: Մեր ընտրական դիրքորոշումները որոշ հոլովոյթ մը ապրեցան: «Հայրենիքի փրկութեան շարժում»-ի կայացման մէջ մեծ էր դերը Դաշնակցութեան: Մեր պահանջն էր անմիջական հրաժարական եւ անցումի կառավարութեան ձեւաւորում: Ինչո՞ւ չիրականացաւ այդ մէկը. ի՞նչ էին հիմնական պատճառները:

Հարցազրոյցը վարեց՝

ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Շաբ.ը՝ էջ 5

ԸՍՏ «ԷՆ. ՊԻ. ՍԻ.»-Ի

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՂՄԸ ՈՐՈՇԱԾ Է ՊԱՅՏԸՆ-ՓՈՒԹԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԻ ԸՆԹԱՅՔԻՆ ԿՈՇՏ ՄՕՏԵՅՈՒՄ ՑՈՒՅԱՐԵՐԵԼ

Ամերիկեան կողմը Միացեալ Նահանգներու նախագահ Ճօ Պայտընի եւ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի յառաջիկայ հանդիպումին մտադիր է կոշտ մօտեցում ցոյց տալ ռուսական կողմին՝ ի տարբերութիւն նախկին նախագահ Տանըլտ Թրամփի վարչակազմին: ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը նշէ, որ այս մասին կը հաղորդէ «Էն.Պի.Սի.»-ն՝ յղում կատարելով իր աղբիւրներուն:



Շաբ.ը՝ էջ 6

ՆԱԾԹԱԼԻ ՊԵՆԵԹ՝ ԻՄՐԱՅԷԼԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Իսրայէլի վարչապետ դարձած է «Եամինա» կուսակցութեան առաջնորդ Նաֆթալի Պենեթը:

Քննսեթի պաշտօնական կայքը կը տեղեկացնէ, որ Իսրայէլի Նոր կառավարութիւնը ստացած է Քննսեթի վստահութեան քուէն. 60 պատգամաւոր կողմ քուէարկած է, 59-ը՝ դէմ:

Յառաջիկայ երկու տարիներուն երկրի վարչապետի պաշտօնը պիտի զբաղեցնէ Նաֆթալի Պենեթ, որմէ ետք, ըստ քուպիսիոն համաձայնագիրի, վարչապետի պաշտօնը պիտի ստանձնէ Եայիր Լապիտ:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԸ

ԻՐ ԶԱՐՈՇԱՐԸԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԼՈՌԻԻ ՄԱՐՉԻՆ ՄԷՃ

ՔՈՉԱՐԵԱՆԻ ԱՌՅԱՆՅ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՐ ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ, ՄՏԱՌՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐՈՒ ՀԵՏ



«Հայաստան» դաշինքի նախընտրական քարոզարշաւի վեցերորդ օրը (12 յունիսին) անցած է Լոռի մարզին մէջ: Դաշինքի առաջնորդներն ու անդամները հանդիպումներ ու հանրահաւաքներ ունեցած են Սպիտակի, Ստեփանաւանի, Տաշիրի, Վանաձորի եւ Վլաւերտիի մէջ:

Դաշինքի առաջնորդ, Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպէրթ Քոչարեան վերոյիշած է աղէտի գօտիին մէջ իր կատարած աշխատանքը՝ նշելով, որ 20 յունիսէն ետք Հայաստանի մէջ պիտի ըլլայ այնպիսի կառավարութիւն, որուն համար պատուի հարց պիտի ըլլայ գերակատարել այդ արդիւնքները:

Հանդիպումներու ժամանակ դաշինքի առաջնորդները անդրադարձած են կրթութեան ոլորտին՝ նշելով, որ ազգային արժեքային համակարգի դէմ ուղղուած փոփոխութիւնները պիտի վերացուին:

Քարոզարշաւի վեցերորդ օրը ամփոփուած է Վլաւերտի քաղաքին մէջ կազմակերպուած հանդիպումով, որուն ընթացքին Ռ. Քոչարեան պատմած է յուլիս 1992-ին տեղի ունեցած ճակատագրական որոշումին մասին, որ հետագային կտրուկ փոխած է արցախեան առաջին պատերազմի ընթացքը:

Շաբ.ը՝ էջ 5

15 ԳԵՐԻՆԵՐ ՎԵՐԱԴԱՐՉԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԱՂՏԱՄԻ ՇՐՋԱՆԻ ԱԿԱՆԱՊԱՏՄԱՆ ՔԱՐՏԷՄՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՅ



Շաբաթ, 12 յունիսին 15 գերիներ վերադարձան Հայաստան:

Գերութենէն վերադարձաններն են՝ «Ստեփանեան Արթուր, Էլիբեկեան Գեղամ, Սեդրակեան Ալեքսան, Գասպարեան Երիկ, Բաբայեան Սաշա, Անդրեասեան Արտակ, Խաչատուրեան Երիկ, Սերունեան Նարեկ, Պետրոսեան Սասուն, Սարգսեան Վրոյր, Բուդդեան Արմէն, Օհանեան Բորիս, Արզարեան Արթուր, Ոսկանեան Դաւիթ, Յունանեան Արգամ:

Հայրենիք վերադարձաններէն 4-ը 27 մայիսին Գեղարքունիքի մարզի սահմանագիծին գերեվարուած 6 զինուորներէն են:

Նշենք, որ Ազրայեճանի արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարած է, որ շաբաթ, 12 յունիս 2021 վրաց-ազրայեճանական սահմանին՝ Վրաստանի ներկայացուցիչներու մասնակցութեամբ, Պաքուն հայկական կողմին յանձնած է 15 ռազմագերիներ, որոնց դիմաց ստացած է Աղտամի շրջանի ականապատման քարտէսները:

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Վրաստանի վարչապետ Իրաքլի Ղարիպաշվիլի իր դիմատետրեան էջին վրայ անդրադարձած է իր միջնորդութեամբ 15 հայ գերիներու վերադարձին եւ հայկական կողմէն Աղտամի ականապատ տարածքներու քարտէսներու՝ Ազրայեճանին յանձնուելուն:

Շաբ.ը՝ էջ 5

ԱՔԸՐ. «ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՊԱՏԱՀԱԾԸ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԳՈՐԾՈՒՈՂ ՈՃԻՐ Է»

Փ ո ի ս վ ա ր չ ա պ ե տ , պաշտպանության նախարարի պաշտոնակատար եւ արտաքին գործոց նախարարի ու արտերկրի լիբանանցիներու գործակատար 2էյնա Աքքր շաբաթավերջին պաշտպանության նախարարության կեդրոնին մէջ նախագահեց արտակարգ նիստի մը, որուն ներկայ գտնուեցան առողջապահության մարզի պատասխանատուները, ինչպէս նաեւ բանակին, ներքին ապահովության ուժերուն, ընդհանուր ապահովության ուժերուն եւ պետական անվտանգության ուժերուն ներկայացուցիչները:



Հանդիպումին ընթացքին ընկարկուեցաւ երկրին առողջապահական մարզին պարզած տազնապայի կացութիւնը:

Նիստին ընթացքին Աքքր գոյուշացուց Լիբանանի մէջ տիրող առկայ առողջապահական կացութիւնը՝ աւելցնելով, որ կը գտնուին առողջապահական մարզի փլուզման սեմին: Ան նշեց, որ բժշկական հոգատարութիւնը վտանգուած է՝ հաստատելով, որ Արեւելքի հիւանդանոցը նկատուող երբեմնի Լիբանանը առողջապահական իմաստով սնանկութեան ենթակայ է:

Աքքր նկատել տուաւ, որ երկրին անդամալուծուած իրավիճակին համար ո՛վ պատասխանատու պիտի նկատենք, չենք գիտեր: «Հիւանդանոցները կը մերժեն հիւանդները ընդունիլ, յատկապէս բանակայիններն ու ապահովական կառույցներու գիտնորներն ու ոստիկանները եւ անոնց ընտանեկան պարագաները: Վիրահատութիւնները կասեցուած են, երկկամերու լուացումը կասեցուած է, իսկ քաղաքացիներուն կեանքը վտանգի ենթարկուած է: Միւս կողմէ, բժիշկներու եւ հիւանդապահներու բաւարար թիւ չկայ երկրին մէջ՝ «Զորոնա»-ի համաճարակին եւ անոնց արտագաղթին պատճառով, իսկ կարգ մը բժիշկներ երեսկայական գիներ կը պահանջեն հիւանդներէն՝ զանոնք վիրահատելու նպատակով», ըսաւ ան:

Աքքր նկատել տուաւ, որ կարգ մը տարրալուծարաններ յայտարարած են, թէ իրենց աշխատանքը պիտի կասեցունեն, իսկ առողջապահության նախարարի պաշտոնակատար Յամատ Յասան ամենօրեայ դրութեամբ կը կատարել անակնկալ այցելութիւններ եւ կը խոգարովէ դեղորայքի պահեստանոցներ, ուր կը գտնուին մեծ քանակութեամբ դեղորայք, ինչպէս նաեւ բժշկական սարքեր եւ երեխաներու յատուկ

կաթ: «Անկարելի է այս արարքը միայն պետութեան պատասխանատուութիւնը նկատել: Ո՛ր է գործակցութեան ոգին, ո՛ր է պատասխանատուութիւնը, ո՛ր է մարդկային խիղճը, երբ կը դիտել ժողովուրդին տառապանքը՝ գիտնալով հանդերձ, որ դեղորայքն ու բուժումը ձեր պահեստանոցներուն մէջ կը գտնուին, երբ այդ դեղորայքը կամ հիւանդանոցային սարքը միայն ամերիկեան տոլարով կը վաճառէ: Ո՛ր է բոլորին խիղճը, երբ Լիբանան կը դիմագրաւէ տնտեսական եւ ելեւմտական արտակարգ ճգնաժամ, եւ ոչ ոք պատրաստ է զիջումներ կատարելու եւ պատասխանատուութիւնը իրարու վրայ եւ Կեդրոնական դրամատան վրայ բարդելով զբաղած է, մինչ մենք միջազգային ընտանիքէն օժանդակութիւն կը պահանջենք, սակայն մենք զմեզ չենք կրնար օժանդակել», շեշտեց Աքքր:

Ան հաստատեց, որ Լիբանանի մէջ պատահածը մարդկութեան դէմ գործուող ոճիր է: «Կը զգուշացնենք, որ արգիւտած է տեսնել հիւանդ, որուն հիւանդանոց մը մերժած է ընդունիլ, կամ այլ պարագայ մը, որ դեղորայք չի գտներ: Պէտք է բոլորս զիջենք եւ համատեանաբար, որպէսզի պաշտպանենք հայրենիքն ու քաղաքացիները՝ լիբանանեան դրամանիշ արժեզրկման առջնութեամբ, ըսաւ ան:

Վերոնշեալ հարցերը քննարկելէ ետք ներկաները յանձնարարեցին, որ ա) հիւանդանոցները բոլոր հիւանդները ընդունին՝ առանց արտօսելու, որ մէկուն հանդէպ բժշկական խնամքի տրամադրումը զլացուի,

բ) Այսօրուընէ սկսեալ մինչեւ չորեքշաբթի, 16 յունիս ընկերային ապահովագրութեան ազգային սնտուկի կեդրոնատեղիին մէջ զուամրուին նիստեր, որոնց ընթացքին կարելի ըլլայ արմատական լուծումներ գտնել՝ բժիշկի այցեգիրը վերջնականացնելու, հիւանդանոցային ծախսերը ճշդելու եւ այլ հարցերու իմաստով լուծումներ ճշդելու, ու զանոնք փոխանցելու Աքքրի:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԸ ԼՈՒՐԵՐ

●ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԵԱՆ նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, Լիբանանի մէջ նախորդ 24 ժաման ընթացքին արձանագրուած են «Զորոնա» ժահրով 81 վարակուածներ եւ մահացած 4 ուրիշներ: Միւս կողմէ, առողջապահության նախարարի պաշտոնակատար Յամատ Յասան 2էյտեց, որ իրենց դեղորայքի մաֆիային դիմադրելու պատիւը ունին՝ աւելցնելով, որ վերատեսութեան պիտի ենթարկեն բժշկական պիտոյներուն սակերը: Ան շեշտեց, որ առողջապահական անվտանգութիւնը կարմիր գիծ է, եւ դեղորայքի վաճառքը չարաշահողներուն ու անոնց փտածութեան դէմ պայքարը պիտի շարունակուի:

●ՄԱՐՈՆԻ համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երկուան իր քարոզին մէջ հաստատեց, որ կառավարութեան կաշտութեան հոլովոյթը խոչընդոտող արգելքները վերացնելու ելքերն ու լուծումները առկայ են՝ աւելցնելով սակայն, որ ոմանք կ'արգիլեն այդ լուծումներուն գործարարութիւնը: Ան շեշտեց, որ այս օրերուն ականատես կը դառնանք հրկիզուած ժողովուրդի մը քաղաքականութեան, իսկ երկրին պատասխանատուները խեղդուած են դժոխային խաղի մը մէջ, ուր կ'իշխէ անձնափոխութիւնը:

●ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ նախարարի պաշտոնակատար Ապպաս Մուրթատա կոչ ուղղեց ամենէն մօտիկ ապագային կազմելու կառավարութիւն մը, որպէսզի ժողովուրդը չշարունակէ ենթակայ մնալ խայտառակութեան:

●ՆԱԽԿԻՆ նախարար Ամալ Ապու 2էյտ շեշտեց, որ ժողովուրդը խայտառակելու իրականութիւնը խիստ մերժելի է՝ հաստատելով, որ դեղորայքի վաճառականներուն անյազ ընթացքը աներեւակայելի է եւ անհանդուրժելի:

●ՆԱԽԿԻՆ նախարար Ուիամ Ուահապ յայտնեց, որ Լիբանան կը գտնուի ամերիկեան շրջափակումի տակ, իսկ եգիպտոս չկրցաւ համոզել Մեւտական Արաբիան՝ նշանակեալ վարչապետ Սաատ Յարիրիին զօրակցելու իմաստով:

●ՀՅՈՐ Լիբանան համախմբումի երեսփոխան Սիմոն Ապի Ռամիս

յայտնեց, որ նշանակեալ վարչապետ Սաատ Յարիրի պէտք է ուղղուի Պաապտա եւ նախագահական պալատէն դուրս չգալ մինչեւ կառավարութեան կազմութիւնը:

●ԱԶԱՏԱԳՐՈՒՄ եւ բարգաւաճում պլոքի երեսփոխան Զատեմ Յաշեմ յայտնեց, որ փրկութեան կարողութիւններով օժտուած, ազդու կառավարութիւն մը կազմելը դարձած է ազգային անհրաժեշտութիւն:

●ՄՈՒՍԹԱԶՊԱՆ պլոքի երեսփոխան Ուալիտ Պարիլիս յայտնեց, որ ժողովուրդը խայտառակելու ենթակայ դարձնող պատասխանատուները սեւ շուկայի վրայ իրենց հայրենիքը առեւտուրի վերածած չարաշահողներն են:

●ԱԶԱՏԱԳՐՈՒՄ եւ բարգաւաճում պլոքի երեսփոխան Ալի Խրէյս յայտնեց, որ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի թէպէտեւ է որոշ ժամանակ մը համբերել, սակայն համբերութիւնը սահման ունի:

●ՀՅՈՐ հանրապետութիւն պլոքի երեսփոխան Հիւսայ Յաուաթ յայտնեց, որ քաղաքացիին դիմագրուած առկայ խայտառակութիւններուն դիմաց՝ կառավարութեան կազմութիւնը վերածուած է կատակի:

●ԱԶԱՏԱԳՐՈՒՄ եւ բարգաւաճում պլոքի երեսփոխան Ալի Պեգի յայտնեց, որ յուսալքութեան, աղքատութեան եւ խայտառակութեան համաճարակը շատ աւելի վատ է, քան՝ «Զորոնա»-ի համաճարակը:

●ՊԱՆԱԳԵԶ-ՅԵՐԵՆԷ երեսփոխանական համախմբումը հաստատեց, որ քաղաքացիներուն տառապանքը մեղմացնելու հիմնական մուտքը կառավարութեան կազմութիւնն է:

●ՄՈՒՍԹԱԶՊԱՆ հոսանքի ընդհանուր քարտուղար Ահմետ Յարիրի հաստատեց, որ նշանակեալ վարչապետը կառչած կը մնայ սահմանադրական իր իրաւութիւններուն, եւ կառավարութեան կազմութեան առումով անոր դիմաց բաց կարելիութիւններ կան:

●ՖԱՆՍԱԶԻ մէջ Լիբանանի դեսպան Ռամի Ատուան շաբաթավերջին հանդիպում մը ունեցաւ Փարիզի մէջ գտնուող արաբական երկիրներու իր պաշտօնակիցներուն հետ:

ՊՈՐԾ ՀԱՍՈՒՏԻ ՄԷՋ
ԱՐԴԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ
ՆՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ ՀԻՄՆԵԼՈՎ՝

ՄԱՅՄՈՒՆԷ ՇԵՐԻՖ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՄՕՏԷՆ ՀԵՏԵՒԵՅԱԼ ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԻՐԱԳՈՐԾԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ՃԻԳԵՐՈՒՄ



Անցեալ շաբաթավերջին Պուրճ Յամուտի քաղաքապետութեան ձեռնարկած վերականգնումի ճիգերու ծրագիրը թեւակոխեց Նոր փուլ մը, երբ ՄԱԿ-ի Մարդկային պաշարներու ծրագիրի (Շու. Էն. Յապիթաթ) գործադիր տնօրէն Մայմունէ Մոհտ Շերիֆ, Լիբանան կատարած իր պաշտօնական անդրանիկ այցելութեամբ՝ զվիսաւոր կեդրոններու ծիրին մէջ շաբաթ, 12 յունիս 2021-ի առաւօտեան այցելեց Նաեւ Պուրճ Յամուտի քաղաքապետութիւն, ուր դիմաւորուեցաւ քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանի, փոխքաղաքապետ Մարտիկ Արսլանեանի, քաղաքապետական խորհուրդի անդամ Ճորճ Գրիգորեանի եւ այլ բարձրաստիճան պատասխանատուներու կողմէ: ՄԱԿ-ի պատասխանատուին կ'ընկերակցէին Լիբանանի մէջ Լեհաստանի դեսպան Փրեմիսլաւ Նիսիլովսքի, Իսլամական բարեսիրական միջազգային խորհուրդի ներկայացուցիչ դոկտ. Սամիր Ապու Ռումման (Զուէյթէ) Միջազգային օժանդակութեան լեհական կեդրոնի («Փոլիշ սենթըր ֆոր ինթըրնեշնըլ Էյտ» PCPM) ներկայացուցիչը եւ լիբանանեան թէ շրջանային առնչակից խորհուրդներու պատասխանատուներ:

Ողջոյնի եւ բարի գալուստի մաղթանքներու ծիրին մէջ, իր արտասանած խօսքին մէջ Պուրճ Յամուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեան անդրադարձաւ շրջանին մէջ պարզուած իրավիճակին, որ հետեւեալը է տարբեր տազնապէսներու եւ 4 օգոստոս 2020-ին Պէյրութի նաւահանգիստի պայթումին: Պօղոսեան իր խոր երախտագիտութիւնն ու գնահատանքը արտայայտեց կատարուող նախաձեռնութիւններուն՝ մաղթելով, որ շրջանին ու անոր բնակիչներուն ցուցաբերուող զօրակցութիւնը կը շարունակուի: Ան յայտնեց, որ Պուրճ Յամուտի 2,2 քառ. քմ տարածութեան մէջ կ'օկուած՝ զանազան պատկանելիութիւններով, ինչպէս նաեւ սուրիացի եւ իրաքցի գաղթականներու եւ օտար աշխատաւորներու 160 հազար բնակիչներ կան: Պօղոսեան յայտնեց, որ Պէյրութի նաւահանգիստին կից գտնուելով՝ Պուրճ Յամուտի տարածքը մեծապէս վնասուեցաւ 4 օգոստոս 2020-ի նաւահանգիստի պայթումէն՝ վնասելով շորջանի մօտ 55 հազար բնակարաններուն 50 առ հփուրը: Այս առիթով քաղաքապետ Պօղոսեան Պուրճ Յամուտի բնակչութեան եւ իր անուկ շնորհակալութեան եւ երախտիքի խօսք ուղղեց ՄԱԿ-ի Մարդկային պաշարներու միատրին, միակական ու ճափոնական դեսպանատուներուն եւ Զուէյթի բարեսիրական հաստատութեան՝ իրենց յատկացուած նպաստներուն համար՝ յիշեցնելով նաեւ, որ նաւահանգիստի նշեալ աղետի կողքին, Պուրճ Յամուտ նոյնպէս կը տառապի Լիբանանի մէջ տիրող «Զորոնա» ժահրի համավարակի եւ տնտեսական ծանր ճգնաժամի հետեւանքներէն, որոնք հիմնականին մէջ թափ տուին սղանքի ու անգործութեան համեմատութեան աճին:

Այս առիթով ներկայացուեցան Պուրճ Յամուտի մէջ ՄԱԿ-ի օժանդակութեան յայտագիրի ծիրին մէջ ցարդ իրագործուած ծրագիրները: Այս գծով խօսք առնելով՝ Մայմունէ Շերիֆ բարձր գնահատեց ու իր հիացմունքը արտայայտեց ցարդ իրագործուած աշխատանքներուն համար՝ մաղթելով փաստագրել եւ իրապարակել անոնց գործընթացի փուլերը՝ իբրեւ յաջող փորձառութիւններ:

Նոյն ծիրին մէջ, Լեհաստանի դեսպան Նիսիլովսքի իր գոհունակութիւնը յայտնեց իր երկրին տրամադրած նպաստին համար՝ շրջանի բարգաւաճման ծիրին մէջ:

Շար.ը՝ էջ 8

ՉԱԻՆ ԽԱՆՆԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ «ԱԶԴԱԿ»



Ամերիկայի Հայ ամետարանչական ընկերակցութեան գործադիր տնօրէն Չաւէն Խաննեան շաբաթ կէսօրին այցելեց «Ազգակ»-ի խմբագրատուն եւ տեսակցեցաւ տնօրէնութեան հետ:

Հանդիպումը առիթ էր խորհրդակցելու ընկերակցութեան կառոյցին եւ տարած աշխատանքներուն մասին՝ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններուն եւ միջինարեւելեան երկիրներուն մէջ:

Նշեց, որ ընկերակցութիւնը կ'իրականացնէ բազմաոլորտ գործառնթներ՝ հոգեւոր, կրթական, դաստիարակչական, բնակեցման եւ բարեսիրական: Այս ուղղութիւնները կը վերափոխատարուին յատկապէս արցախեան պատերազմի եւ միջինարեւելեան երկիրներու ապրած սուր տազնապէսներուն ստեղծած իրավիճակները նկատի ունենալով:

Նշեց, որ Չաւէն Խաննեան ղեկավարած էր Միացեալ Նահանգներու մէջ կազմուած սուրիահայութեան օժանդակութեան միացեալ մարմինը, որ հըսկայածաւալ օժանդակութիւն ապահոված էր պատերազմական իրավիճակին մէջ գտնուող սուրիահայ համայնքին:

Հայ ամետարանչական ընկերակցութեան վերջին շրջանի գործունեութեան մասին Չաւէն Խաննեան հարցազրոյց տուաւ մեր պաշտօնակից «Վանայ Ձայն»-ին: Հարցազրոյցի խմբագրուած տարբերակը լոյս կը տեսնէ «Ազգակ»-ի էջերուն մէջ, յառաջիկային:

«ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՆՏԻՆ

- «Փէյփալ» ծրագիրին միջոցով
- Սերժ Վահէ Խաչատուրեանի մահւան առիթով՝
- Տէր եւ տիկին Վահէ Մանուկեան 100\$

ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒՆԸ

ՅԱԶՈՂ ԱՊԱՏԱՅԻ ՄԸ ԳՐԱԽԱՆՆԵ

Եղիշէ Մանուկեան քուէնը հայեցի կրթութեան կողքին ունի՝

- 1.- Լիբանանեան ծրագիր՝ Ա-Ժ դասարաններ:
- 2.- Պատար ծրագիր (օտարախաչատարներու յատուկ):
- 3.- Յատուկ պարագայ ունեցողներու ծրագիր (special cases):
- 4.- Անցանց (online) դասերու ամբողջական ծրագիր:
- 5.- Ֆրանսերէն լեզու՝ Մանկապարտեզէն մինչեւ ԺԲ դասարան:
- 6.- Մանկամուր, որ կ'ընդունի 6 ամսականէն սկսեալ երեխաներ:

Արձանագրութիւնները տեղի կ'ունենան ամեն երեքշաբթի եւ հինգշաբթի օրերը:

Անվարան դիմեց՝ Եղիշէ Մանուկեան քուէնը տնօրէնութեան եւ վստահ եղ՛ք, որ ամէն հարցի լուծում պիտի գտնէ:

Հեռ. 04-542037

ՏՍՕՐԵՆՈՒԹԻՆ

Առցանց Լսարան

Երկուշաբթի , 28 Յունիս 2021-ին, Պէյրութի ժամանակացոյցով ժամը 19:00-ին:

Մասնակցութեան համար գրել minas777@gmail.com եւ նամակին կամ +961 70 80 70 50 համարին (WhatsApp)

Հետազարտչաւ ու Արագայի մեր Պարսնաբուրդները

2Եկուցող՝ Դոկտ. Յարութիւն Արմէնեան
Համաճարակաբան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ
ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ԱՌԱՋ ԱՆՏԵՍԱԾ ԵՆ
ՆԵՐԴՐՈՂԻ՝ ԶՐԱՀԱՍԵՔԵՆԱՆԵՐ
ԱՐՏԱԴՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ**

Հայաստանի ներկայ դեկլարանտը կը մեղադրեն նախկինները, երբ երկրի մէջ սփառ քան մը պատահի: Պատերազմը պարտուելուն մէջ ետ մեղադրեցին նախկին նախագահները: Անոնք ոչ մէկ պատասխանատուութիւն կը ստանձնեն իրենց սեփական թրջութիւններուն համար, հակառակ անոր որ արդէն երեք տարիք ի վեր իշխանութեան ղեկը իրենց ձեռքէն է: Թէեւ նախկին դեկլարանտները կարելի է մեղադրէ բազմաթիւ անօրինականութիւններու համար, բայց այսօրեան դեկլարանտները ետ ունին թրջութիւններու իրենց բաժինը:

Ահա՛ փայլուն օրինակ մը, թէ ինչպէ՛ս
ներկայ դեկապարները ամբողջովին սխալ
վարուած են ազգային ապահովութեան
կարելորագոյն նախագիծին հանդէպ,
որուն համար անոնք լիովին մեղաւոր են:
Այսպիսի օրինակներ շա՛տ շա՛տ են:

Արտակ թովմամետես անուով հայ գործարար մը ունէր համապատասխան կապէր է փայլուն գաղափար մը՝ Յայաստանի մէջ գեթմամանկակից գրահամբէնանէր արտադրելու, ապահանջ մէկ մասը Յայաստանի կառավարութեան նուիրելու: Կը թուէր, որ Յայաստանի պաշտօնեաները կ'ողջունէն այդպիսի արժեքները առաջարկ մը եւ մանջանք ի գործ կը ղնեն նպաստելու համար: Երկրորդմայիս այս կարելուր հնարաւորութեան, որ մեծ նշանակութիւն ունի ազգային ապահովութեան առումով: Ասիկանահաւանական պատմութիւն մըն է Յայաստանի մէջ ապաշնորհի անխաղաղ պետական բարձրաստիճան պաշտօնեաներու մասին, որոնք չկրցան օգտուիլ այս զեպակ մտայաշունէ:

2018-ին, Հայաստանի վարչապետի պաշտոնին Նիկոլ Փաշինյանին իշխալու թեան զայն անմիջապես ետք, թուվմասեան տեսակցեցաւ անոր հետ եւ առաջարկեց փոխիւստոր ուղարկւեր Ներքին Հայաստանի մէջ՝ 30 տարուան փորձ ունեցող գրահամալքեաններու յայտնի արտադրողը, քանադական «Streit Group»-ին հետ, որ գործարարներ ունի աշխարհի ինիզ երկիրներու՝ Զանաապի, Արաբական Միացեալ Էմիրուիթիւններու, Յորդանի, Յնդկաստան եւ Փաքիստանի մէջ։ Վեցերորդ տան գործարան մը պիտի իրմուեր Հայաստանի մէջ։ Ներդրումներ ունիիանուր գումարը կրնար հասնիլ 20 միլիոն տոլարի՝ ներառելով ռազմական ուղորդի կպպուած ալ Ներդրողներ եւ։ Նախագիծը կաւ աշխատանքի հաւուիտարը կարելիութիւն պիտի տալեծեւ։

2018-ին վարչապետ Փաշինյանն հետաքրքրություն ցուցաբերեց նախագիծին նկատմամբ եւ ըսաւ՝ որ օգնականներն են, որ հետամուտ ըլլան այս ծրագրին: Յմալի է, որ Փաշինյանի քննորոշ պաշտօնակետերն անգործունէայ ըլլալուն եւն անվիրաւորեան պատճառով, երեք տարին ետեւ նոյնիսկ, ցարդ ոչ մէկ յառաջընթաց արձանագրուած է այս կարեւոր նախագիծին ուղղութեամբ, հակառակ վարչապետին եւս թովմաստեղին ունեցած հետաքայ քսելի մը հանդիպումներուն: Այս գրահամեմատելի շատ օգտակար էլ ըլլալին անցեալ տարուան Ազդեցեանին հետ պատերազմին՝ փրկելով հայ գին-ւորներն անհամար կեանքեր: Տաւօք, հայ պաշտօնակները անուշադրութեան մատուցելի այս նախագիծը, ինչպէս՝ պատեալմամբ առաջ, ունեցարին եւ անէ ետը:

Թովմատեանի առաջարկը՝ յառաջիկայ 10 տարիներու ընթացքին եւ աստիճանաբար մօտաւորապէս 1300 գրառամբէ-էկայ արտադրել, իսկ անոնց 130-ը հայկա-կան գիւտած ուժերուն ձրի Նոյիկին էր։ 450 հազար տոլար կամ աւելի արծողո-թեամբ իւրաքանչեւ մեքենայի պարա-գային, Նոյիկուած գիւտական արհեստա-գիտութեան ընդհանրաւոր արժեքը պիտի լայւամբ աւելի ակն 60 միլիոն տոլար։

Իր կարգին, ԹՊՄՍՍՆԵԱՆ Հայաստանի կառավարությունն խնդրեց, որ իրեն տրամադրեղ անկործնելու հողատարածք այս արտադրական գործարանը ազատ արդյունաբերական գոտիի մեջ հիմնելու համար: Պատահաբար ան տեղեկացած էր Տեղանի ծայրամասը գտնուող չօգտագործուած դատարկ հողամասի մը մասին, որ կը պատկաներ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան: Նախագիծը չիրականացուելու պարագային, ներդրողը պարտաւոր էր նուիրուած հողատարածքը Հայաստանի կառավարութեան մետաղաոճնէ:

Թույլ են վերջին երեք տարիներու ընթացքին Թովմասեանի ընկերութեան («Առաջին արդիւնաբերական գօտի») կողմէ հայ պաշտօններուն յղուած մէկ տասնեակէ աւելի նամակները, ուր կը խնդրուէր հաստատել Թովմասեանի առաջարկած նախագիծը: Այստեամէնայնի, հակառակ պատասխան մը ստանալու համար բազմիցս կատարուած խընդրանքներուն, Յայաստանի կառավարութիւնը չէ պատասխանած Թովմասեանի: Յայաստանի կառավարութիւնը Թովմասեանի

մասեանիս առաջարկը փոխանցեց միջգերատեսչական յանձնախորհուրդի՝ յանձնարարելով քննարկել նախագիծը։ Միջգերատեսչական յանձնախորհուրդի մեջ ընդգրկուած են՝ Հայաստանի տնտեսութեան, էլեմիտոքի, բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան, տարածքային կառավարման եւ ենթակառուցման, արդարադրատութեան նախարարութիւններու, պետական եկամուտներու կոմիտէի, քաղաքաշինութեան կոմիտէի, առեւտրա-արդիւնաբերական պալատի, արդիւնաբերողներու եւ գործարարներու միութեան ներկայացուցիչներ։ Չարմատակ է, որ միջգերատեսչական յանձնախորհուրդի մէջ ոչ ոք ընդգրկուած չէր պաշտօնաւորեան նախարարութենէ՝ ռազմական նախագիծը պատշաճ գնահատելու համար։ Միջգերատեսչական յանձնախորհուրդի ուղեցոյցները կը պահանջէն, որ անիկա աշխատանքային քանա օրուան ընթացքին քննարկ եւ կառավարութեան ներկայացնէ սղեակ եւեած որդէւ առաջարկ։ Սակայն այդ վերջնական ժամկէտը շատոոց անցած է՝ հակառակ կատարուած քանի մը յիշեցումներու։

Այս պատմության ամենևն զարմանալի մասը 6 մարտ 2021-ին դիմատետրեան անսպասելի զրառույն էր՝ տնտեսությանն նորանշանակ նախարար Վահան Զեղրդեանի, որ ուսողության ճիւղը աւարտած է, սակայն անտեղեակ է տնտեսագիտութենէ:

Նախարար Զեորբեան ամբարտուա-
նորէն գրեց. «Իրականութեան մէջ եւս
սեւեռացած են այս արդիւնաբերական կո-
տիկն կապուած նախագիծի որոշման
կայացումը, որովհետեւ այդ մէկը ծիծա-
ղաբանութեան կ'արհամարհէր Հայաստանի
քաղաքացիներուն շահերը»: Իրականու-
թիւնը այն է, որ նախարար Զեորբեան ի
վիճակի չէր կատարելու այս նախագիծը
երկու պատճառով.

1) Իբրեւ վերջերս նշանակուած նախարար՝ ան նոյնիսկ ներկայ չէր ի՞նչ, երբ այս նախագիծը ներկայացուեցաւ վարչապետին եւ այնուհետեւ յղուեցաւ միջգերատեսչական օրէնսդրութեան մարմիններ:

2) Այս նախագիծը հաստատելու կամ մերժելու մասին որոշումը միայն կրկան կայացնել միջգերատեսչական յանձնախումբը եւ վարչապետը:

Այսօրհանդերձ, նախարար Զեորդեան, շարունակեց աւելի տարօրինակ պահանջներ ներկայացնել: Ան գրեց. «Թող Թովմասեան երկու շաբթուան ընթացքին ծրագիրը ներկայացնէ կառավարութեան՝ առիկ հաստատում, իսկ եթէ 9 օրէկարտ հողակտորը Երեւանի մէջ կ'իւզէ վերցնել իր կողմէ եղած շնչին ներդրման խոստումին դիմաց, ապա ես կը մամս կարծիքիս վրայ» ըսելով, որ ասիկա ոչ թէ ներդրումային ծրագիր է, այլ՝ Յայաստանի քաղաքացիներու կողպառն: Մենք նաեւ առաջարկած ենք այս գործառքը իրենց պայմաններով եւ հարկային արտօնութիւններով իրագործել Երեւանէ տարբեր այլ քաղաքի մը մէջ, բայց, անհասկընալիօրէն, Երեւանի նոյն այդ թանկարժեք հողակտորն է, որ իրենց պէտք է արտադրական այս գօտիին համար:

Նախարար Զեորբեան մոլորութեան մէջ կը ճգ հասարակութիւնը: Թէեւ քակի ըզ տարիէ ի վեր Յայաստանի կառավարութիւնը չէ արձագանգած առաջարկին՝ սակայն կը պնդէ, որ պիտի պատասխանէ երկու շաբթուան ընթացքին: Ինչո՞ւ. չէ արձագանգած այս առաջարկին՝ անցեալ տարուան նոյնքերին նշանակուելէ ի վեր: Փաստը այն է, որ կառավարութիւնը երբեք հսկայադաժ առաջարկ չէ ըրած եւ զայն երբեք չէ քննարկած ներդրողին հետ: Ի դէպ, լոյսինքն պաշտպանութեան Նախարարութիւնը, որ Թովմատեանին առաջարկած է հողակտոր՝ երեսնի ծայրամասը, ոչ թէ անվճար, այլ՝ գնելու համար:

Վերջապես, Զերոբեանի կողմէ խիստ ոչ մասնագիտական Է դիմատետրեան գրառմանը արձագանգել բազմալիլոն արժողութեամբ ռազմական արտադրանքի ներգրաւման լուրջ առաջարկին: Ցաւօք, այս մէլը կ'արտաջղացնէ Նախարարին ստանձնած աշխատանքի որակաւորման բացակայութիւնը:

Ամփոփելով. Հայաստանը պատերազմի մեջ պատրուդեցաւ շատ փոքր պատճառներով, բայց այսպիսի վարքագիծ ոչ որպէս նախադարձի մը եւ անտեղեակ կառավարութեան մը կողմէ վստահութիւն չի ներշնչեր, որ անկէկ կրնայ շուտով ներդրուել Ներգաղթի եւ բարեկեան երկրին տնտեսական ողբայի փինկը:

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ

«Քալիֆորնիա Զուրիճը» թերթի
իրատարակիչ եւ խմբագիր
Արեւելահայերէնի թարգմանեց՝
ՌՈՒԶԱՆԱ ԱՄԱԳԵԱՆ
Արեւմտահայերէնի վերածեց՝
ՍԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԸՆՏՐԵԼ ԿԱՅ...
ԵՒ ԸՆՏՐԵԼ ԱԼ ԿԱՅ...

Շուտով մեր հայրենիքի մեջ տեղի պիտի ունենայ
նոր Ազգային ժողովի ղևակահեղությունը:

Արդ, այս տողերով կ'ուզեմ դարձեալ կամուրջ մը
նետել, կամ ունեցած կամուրջիս վրայով հասնիլ ու
կապուիլ անխտիր բոլոր ընթերցողներուս, որպէսզի
օրուան խորհուրդին մէջ փաթթուած՝ կրկին պարզեմ
միտքս:

Ըսեմ, որ այս անգամ եմ մտաոհոգ բառերով կ'առաջնորդուիր տողերս, որովհետեւ այս օրերուն Հայաստանի մեջ խառնաշփոթ կիման կը գոյություն ունի: Տեսակ մը՝ անհամ եւ անստորոգ մթնոլորտ: Իր կարգին, աշխարհի ալ մտօնիկ եւ ապշադար մեզ կը դիտէ, որովհետեւ կարծես թէ մե'նք մոռցած ենք, որ կը պատկանինք այսօրուսին, եւ որ այս օրը կը պահանջէ յատուկ նպատակակետ:

Բայց, անկախ ասկե, յիշեցնելու կարգով ըսեն, որ բոլորս ալ հոգիով լեցուն ժողովուրդի մը մաս կը կազմեն քաղաքացիներ, որ հայ կը կոչուի: Սփիւռը ու հաշիւատան՝ միասին ապրած ենք եւ տակաւին կ'ապրինք հայ ըլլալու եւ մնալու հաճելի եւ դժուար փորձառութիւնը: Բայց ամեղորեն չեն գիտեր, թէ մենք բոլորս ալ որքանով մեր պատմութիւնը կը ճանչնանք:

Վերելը յիշեցի, որ մեր հայրենիքեն ներս ԱԺ-ի նոր ընտրութիւն տեղի պիտի ունենայ, ու այս մէկը կ'ենթադրէր նոր առիթ եւ անոր կողքին այ՛ նոր յոյսեր:

Գիտենք, որ ապագայի ծրագիրներով ապրող մարդը առհասարակ պետք է աչքի առաջ ունենալ որեշէնչով է անսակարկ նուիրումի օրինակը։ Սակայն այնպես կ'երեւի, որ Յայաստանի ստեղծագործական աշխատանքը կը պահանջէ ո՛չ միայն նուիրում, այլ նաե՛ր բոլոր ներքինի է արտաքին հարցերն էլ խնդիրներէ ձեռքբացատած ուղիք։ Նաե՛ր զանձ, որ ինչպէս ամէն երկրի մէջ, մեր մօտ այլ «ընտրութիւնը» նոր յոյսեր կը շարժ մարդկային կեանքի հորիզոններուն վրայ։ Ուստի, իբրեւ ընտրող քաղաքացի, կը կարծած, թէ իւրաքանչիւր անհատ պարտաւոր է ինքն իր զիմաց նստած, տեսակ մը՝ հայելիի առջեւ, ինքզինքնի հարց տայ, լաւապէս քննէ, լաւ կամ գէշ ճշդորոշէ, կշիռքի զարնէ ընտրութեան մասնակից թէկնածուն է անոր հրամցուցած առաջադրութիւնները։ Բայց արդե՞հ ընտարկող հայրենակիցը այս առթիւ քաջութիւնը պիտի ունենայ ինքզինք ղիտելու և վերաբժեղութիւն իր ինքնութիւնը։

Չեմ գիտեր: Իրեն հարգնելու ենք:

ԱՆԵՂԵԾՈՐԷՆ ԸՆԵՄ, որ հաւատօք պարզապէս երազի ու գեղեցկութեան փնտռողք մըն է, որովհետեւ պէտք է գիտնալ, որ մասնաւոր ընտրութիւններու շրջանին եւ ամէն տեղ բառը եւ անկէ կախուած խոստումը միշտ ձրի եղած են... Բայց Նաեւ գիտեմ, որ զանազան պատճառներով, յայտնի եւ անյայտ պայմաններու բերումով շատեր պիտի խուսափին նման աշխատանքէ մը: Արդ, պէտք է ըսել, որ շատեր իրենց դիմաւ ներկայացուած առաջադրութիւններուն մէջ յանգնութիւնը կ'ունենան իրենց ներաշխարհը պնդելու՝ սենւ ու ճեմմակը դուրս բերելու համար: Ինչու կը կարծեմ, որ այս վերջիններէն են, որ փայլն իրաւունք կ'ունենան լաւատեսութեամբ դիմաւորելու ապագան, որովհետեւ կ'ունենան գիտնալ, թէ որո՞ւ պիտի տան իրենց ծայրը, իրենց վստահութեան ջրուն, եւ թէ՛ իրենց նախասիրած թելաածուն ո՛ր պիտի կարենայ հասցնել երկիրը, եւ կամ ինչե՞ր ծրագրած կամ որոշած է հայրենիքի փայլուն ապագայի յատուկ:

Լա՛ւ յիշենք. անսպառազ գոյութիւն մը եւ կամ անխմաստ ու թելադրուած «անուն» մը ընտրելը անօգուտ է թէ՛ անհատին եւ թէ՛ հայրենիքին համար:

Արդ, կը յուսամ եւ կը փափաքեմ, որ այս անգամ ընտրութիւնը ըլլայ ու անցիկ խաղաղ, արդար ու հա-
ն՝ ոգեշնչող: Որովհետեւ կարգ ըն նախկին երեւոյթ-
ներ, որոնց դարձած են ցցուն եւ աչքառու, անհակադա-
տացունքն են մեր բոլորիկ մտածումներն ու զգա-
ցունները: Անոր համար շատ երկար կը մտածեմ իհն-
ու նոր թեկնածուներուն անկեղծութեան, անոնց ներ-
կայացունքն եւ առաջարկած ծրագիրներուն եւ մա-
նահայր բեղեցի «Նորութիւնները» մասին:

Ու եթե յանկարծ ինձի հարցնելու ըլլաք թեկանծուկ հայու կերպարի մասին, ըսեմ, որ, իմ կարծիքովս, այդ թեկանծուն, իբրեւ զարգացած միտք, գիտակցութեան հասունութեան կողքին, հաշտուած պէտք է, որ ըլլալ մեր երկրի ներկայ ցաւայի եւ վշտային իրականութեան հետ: Նաեւ ան ըլլալ մտածող ու արդարօրէն տրամաբանող եւ անպայման յաղթահարող մարտահրաւերներուն մասնակից դարձող անհատ: Ամէն հաղցի քջաշտողեակ եւ մասնաւոր, եւ շրջահայեաց: Դայրենի մշակութային կենքին հոգ միայն իրագէտ, այլեւ՝ զարգացնող միտք: Նոր շունչով եւ բոլոր ներքին ու արտաքին հարցերուն ազգային արժանապատուութեան զգացումով մօտեցող անհատ: Պատասխանատու եւ վստահելի անձ: Ծիշչու ու սխալը գանազանող եւ դիրքորոշող քաղաքացի: Արժանքին արժեւորող եւ արդար՝ արդարացնող կրօնագամարու: Այլ խօսքով՝ ազգային մեր կենքին հեւքը նորոգող մը, որ միշտ նոր աշխթեր եւ նոր յոյսեր պիտի բերէ իրեն հետ: Մէկը, որ պիտի փորձէ եւ ճշկի անպայմանօրէն եւ գործնականօրէն մասնակցիլ ազգին եւ պետականութեան նոր փայլք տուող ու պահող ծրագիրներու իրականացումներուն:

Ըսեմ, որ ինձի համար հայ պետականությունը կը տարբերի բոլոր միւսներէն: Մերին չ'է՝ հիմնուած աշխարհագրական գրաւումներու վրայ: Մեր պետականութիւնը եւ մեր նկարագիրը հիմնուած են մեր հայկականութեան վրայ:

Ապա, միևնույն ժամանակ, եթե հարց տրուի, թե ընտրող քաղաքացին ի՞նչ պետք է ընէ, ըսեն, պարզապէս չենք կարողանալ պատասխանել, որ վերահաստատէ սեփական իր արժեքները։

ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ
bedig43@aol.com

Շար.ը՝ էջ 6

ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԱՄԷՆ ԲԱՆԷ ՎԵՐ

Հայաստանի խորհրդարանական արտա-
հերթ ընտրություններու քարոզարշալի հիմնե-
րորդ օրն ենք. ուրբաթ, 11 յունիս 2021: Յօդ-
ածնը երե լոյս տեսնւ, երկու կամ երեք յաւել-
եալ օրեր անցած կ'ըլլան. արդեօք աւելի յոս-
տակութեան ակնաւանդն կը դառնա՞նք, թէ՛ կը
շարունակուի ցարդ ցուցադրած անմակար-
դակ ու անհեռանկար քարոզչութիւնը: Իշխա-
նութիւնը ժամանակաւորապէս գրաւող ուժը
յամառօրէն կը շարունակէ բաւակմինի անց-
եալի քննարդաութեան նկիթնուն շուրջ, ինչ-
պէս որ ըրած էր իր իշխանութեան երեք տա-
րիներուն տեւողութեան: Վերջին երեք տարի-
ներու ծախսողմնները են կը վերագրուին
նախկիններուն: Իսկ յօտաւոր թէ միջին հե-
ռաւորութեամբ ապագային մասին ոչ մէկ
ծրագիր, ոչ մէկ նախատեսութիւն: Այս վեր-
լոյսի կ'արտայայտէ կրկնուող իշխանական
պատգամը. կայ վերադարձ երեք տարուան
վաղեմութեամբ սպառնալիքներուն: Նկիւղ
Փաշինեան ընտրողներուն ամռնազն 60 առ
հարիւրին ձայները կ'ակնկալէ, խոստանալով
«թաւշեայ» ղեկավարումը փոխարինել «պող-
պատեայ» ղեկավարմամբ, այսինքն՝ առկա
քառասայի կիմակը աւելի խորացնել, թշնա-
մանը արմատացնել, հանրութեան երկպա-
ռակութիւնը մայրուն դարձնել: Զաղաքական,
տնտեսական, ընկերային, առողջապահա-
կան, ուսումնական-կրթական ոչ մէկ ծրագիր:
Ըստ Նկիւղ Փաշինեանի, ամէն բան լաւ ու ճշգ-
րիտ է կատարուած, բայց խանգարողներ
կան, որոնք պէտք է ապտուհանայ:


Հարցերու ներկայացման այս եղանակին նպատակն է շեղել գոյութիւն ունեցող բարդ ու անմիջական լուծում պահանջող խնդիրներուն արծարծումը, լուծումներու որոնումը, առաջարկներու ներկայացումը: Ամենօրեայ խորքանքննելու պատասխանելով, ընդդիմա-դիրքերը հնարաւորութիւն չեն ունենար իրենց գաղափարները ներկայացնելու եւ բանական քարոզաբար: Կատարելու: Փարթիստաբար, ընդդիմադիրքերը հասկացած են արդէն մաշած, այս մարտավարութիւնը եւ քիչ, շատ քիչ կ'արձագանքէ ցեղաբանկումներէ: Աղ-կիւնըքը կը ստացուի ոչ թէ բանական, այլ խու-լերու խօսակցութիւն: Մտադրող հրապարհածն ոչ թէ ծրագիրներու ու գաղափարներու միջեւ ընտրութիւն կատարելու, այլ ընտրացունք-ները գլխաւորող անհատներէ մեկը ընտրելու: Համակրանքի կամ հակակրանքի հիման վրայ: Իսկ շատ պոռացողը, շատ ճնճկացողը, շատ ամբաստանողը կը կարծէ, որ որքան բարձր գոյալ, այլեւս իրաւունք կ'ունենա:

Քարոզարշափի մնացած օրերուն կը յուսանք, որ պիտոր ջուրերը հետզհետէ կը պարզուին, բանականութիւնը կը փոխարինէ ամբողջականութիւնը եւ տրամաբանութիւնը կը յաղթանակէ: Սովորական ու ընթացիկ ընտրութիւն մը չէ, որ կոչուած ենք կատարելու: Ընդդիմութիւնը կ'ուզէր, որ ստեղծուէր առժամայէ կառավարութիւն մը, որ խաղաղեցնէր մթնոլորտը ու ապա դիմէր ընտրութեան: Իշխանութիւնը, գիտնալով, որ հանրարտ ու բանական մթնոլորտի մէջ կատարուող ընտրութիւնը նպաստաւոր չէ ամբողջակարութեանը կեդրակոտող իր ընթացքին, պարտադրեց ընտրութեան արագացումը կայացումը, ինչպէս ըրած էր 2018-ի ղեկավարներին: Բայց ժողովրդիկ զգալի թիւ մը արդէն հասկնացեալ են՝ նման հապճեպ, դաւադիր որոշումին դրդապատճառը ու երես թե՛քած սուտ յեղափոխականներէ, որոնք երկիրը մատնեցին անդին:

Շատ չմնաց. 3այաստանը պիտի ազատուի պետական ու ազգային մտածողութեան զուրկ բախտախնդիրներէն ու իրենց առաջնորդ հանդիսացող մակարոնէն: Պիտի յաղթանակէ ճշմարտութիւնը, իմաստութիւնը, ազգ, հայրենիք ու պետութիւնի ամեն բանէ վեր դասող բանականութիւնը:

21 յունիսին պիտի դիմաւորենք նոր արշա-
լոյս մը, վերստին անկախացած Հայաստանի
արշալոյսը. կորսուածը վերագտնելու, ասեր-
ւածը վերաշինելու, քանդուածը վերակերտե-
լու համար յաման ու ըրտնաթոր աշխատան-
քի հրաւիրման առաւօտը:

անէ վեր:



ՍՆԱՔՆԵՐ

ԱՆԳԼՈՒԽ ՀԱՅԱՍՏԱՆ...

Արա Այվազեանի հրաժարականեն ետք, արտաքին գործոց բոլոր փոխնախարարները հրաժարական տուած են: Ըստ մամուլյ տեղեկութանց, փոխվարչապետ Տիգրան Աւինեան ճիգ կ'ընէ փոխարինողներ գտնելու, բայց չի յաջողիր: Նախարարութիւնը մինչեւ իսկ պաշտօնական բանքեր չունի: Փաստօրէն Յայաստանի դիւանագիտութեան մարզը, որ, ըստ Այվազեանի, չէ պարտուած (պարտութիւնը քանի՞ անուն կ'ունենայ...), մնացած է անգլուխ:

Հրաժարեալ վարչապետ Նիկոլ Փաշինեան, ընտրապայքարի դաշտը նախընտրելով, ինքն իրեն արձակուրդ տուած է մինչեւ ընտրութիւններու նախօրեանը, ջղազարի շարժումներով բոց ու կրակ կը ծայթէ... ընդդիմադիրներուն դէմ, սպառնալիքներ կ'արձակէ մինչեւ իսկ իր կողքին քալողներու, որոնք յայտնապէս (իր տրամաբանութեամբ) չեն շարժիր իր պատկերացումներուն համաձայն: Ուրեմն հրաժարեալ կառավարութիւնն ալ մնացած է անգլուխ: Կատակասեր մը ըսած է. Յայաստան արդէն անգլուխ է գոնէ 10 նոյեմբեր 2020-էն ի վեր: Ի՜նչ տարբերութիւն...

Հայաստանը ամիսներէ ի վեր իրողապէս անգլուխ գտած Ազրպէյճանը ամէն օր նոր ոտնձգութիւն մը կը կատարէ եւ կը մնայ անփոխադարձ: Վերջին նորութիւնը «մառախուղի պատճառով ճամբան կորսնցուցած» հայ գինւորի մը գերեվարումն է (ո՛վ կ'ըսէ, որ պաշտպանութեան նախարարութիւնը հնարագէտ չէ եւ գլուխ չունի): Ան անլցած է քաղաքական սակարկութեան վերածուած մեր գինուորներուն եւ քաղաքայիններուն վրայ: Անգլուխ Յայաստանը Եւրոպայի եւ այլոց դուռերը ափ առած է՝ հաւատարիմ մնալով «հարցերը դիւանագիտական միջոցներով պիտի լուծենք»-ի խոստումին (որո՞ւ հոգը, որ դիւանագիտութիւնը անգլուխ է): Ցաւուն սրտով մէկը հարց տուեր է. ինչպէ՞ս կ'ըլլայ, որ ազերիները հարիրով ու հազարով Յայաստան կը թափանցեն, դիրքեր կը գրաւեն, կ'ամրանան, քանի մը օրը անգամ մը նոր գերիներ կ'որսան, իսկ մենք ինքնապաշտպանութիւն ըսուածը մոռցած ենք, անոնցմէ հատ մը կամ տասնեակ մը չեն կրնար գերի բռնել եւ ԲԱՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԶԱՄԱՐ ԱՐԵՒԻ ԱՍՈՐԻ ԴԻՐԵ ԱՊԱՅՈՎԵԼ:

... Այպիսի՞ «գլուխո՛վ» կ'ուզեն պահել իշխանութիւնը:

Փաշինեան յայտարարեր է, որ Ազրպէյճանի ձեռքին գերի բռնուած հայերը կրնան իրեն երկու ամիս ալ ներել, եթէ իրենց ազատութիւնը չկարենայ ձեռք բերել, սակայն պիտի չներեն, եթէ ինքնիշխանութիւնը եւ անկախութիւնը կորսնցնենք:

Ինչպիսի՞ գլուխէ մը կրնայ բխիլ նման հանճարե՞ր մտածում մը. Արցախի երեք քառորդի կորուստեն, Յայաստանէն ներս ազերիական թափանցումներն (ըստ ոչ ամբողջական հաշւարկներու, արդէն սահմանային գօտիներէ ԳՐԱՄԱԾ-ՆՍՏԱԾ են մօտաւորապէս 100 քառ. քմ տարածութիւն, ակնդէտ կը սպասեն «կըղզեակներու վերադարձ»-ի փաշինեանական խոստումին իրականացման), օր ցերեկով գերեվարութիւններէ եւ բազմատեսակ ոտնձգութիւններէ ետք, ի՜նչ ինքնիշխանութեան մասին է խօսքը: Սրամիտ մը նկատեր է, որ Փաշինեան չէ խօսած ՅՂՂԵՐՈՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ պահպանումին մասին:

Պաշտօնական ընտրապայքարի շոգեկառքը երկու օրէ ի վեր կը սուրայ ամբողջ ուժով: Մօտէն հետեւողը կը հասնի այն համոզումին, որ մրցադաշտ մտնողներուն մեծ մասը կը գործէ «ամէն գլուխէ ձայն մը» տրամաբանութեամբ (վարչապետի աթոռին աչք ունին աւելի քան 20 թէկնածու): Լուրջ քննարկում եւ հաւաստի խոսուումներ կը լսուին միայն քանի մը կողմերէ: Իշխանաւորներուն հաւատք ընծայել՝ կը նշանակէ տուալտիլ 3 տարի առաջուան մթնոլորտին մէջ, մինչդեռ սեպտեմբերի վերջին օրերէն ի վեր բոլոր երազներն ու խոստումները ջարդ ու փշուր եղած են: («Քալողներ»-ը կրնան նոր կորուստներ ալ «պարգեւել»): Բարեմիտ քրիստոնեայ մը պիտի ըսէր. «Հայաստան՛, ներե՛ անոնց, գի չեն գիտեր, թէ ի՜նչ կ'ընեն կամ կը խօսին...»):

Անգլերէն խօսք մը կայ. «Ամէն մութ ամպ արծաթեայ երիզ մը կ'ունենայ»: Յայաստանի մէջ ալ ամեն քան տժգոյն չէ (Շուշիի կամ... Սիւնիքի այս կամ այն գիւղին պէս): Երեքշաբթի, 8 յունիսին Յայաստանի մէջ Պաակաւոր ժահրի պատճառով ՄԱԶ ԶԷ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԾ (առաջինը՝ աւելի քան տարիէ մը ի վեր): Տեղ մը գլուխ(ներ) մնացած է ուրեմն: Մի՞ յուսահատիք:

Ս. ՄԱՅՏԵՐԵՃԵԱՆ

8 յունիս 2021

ԹԻՐՔՈՒՀԻՆՆ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՈՒՄԸ

(Ի ՅԻՇԱՏԱԿ ՄԵՉՄԷ ԱՌՅԱԼԵՏ ԲԱԺՆՈՒՄԾ ԲԺԻՇԿ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԻԿՈԼԵԱՆԻՆ)

Բժիշկի մը պարտականութիւնն է դարմանել-բուժել իրեն դիմող հիւանդները՝ մոռնալով անոնց պատկանելիութիւնը, ազգութիւնը, կրօնը, գոյնը եւ տարիքը: Այս սկզբունքին համաձայն, Պէյրութի Զլեմանսօ թաղի դարմանատանս մէջ ընդունեցի հիւանդ թրքուհի մը՝ Կիւլայտընը, որ շատ մաքուր անգլերէն կը խօսեր: Ան ժամադրութեամբ եկած էր եւ յանձնարարութեամբ՝ Պէյրութի Պապ Իտրիս փողոցի վրայ գըտնուող հայ դեղագործին: Կիւլայտըն վայելուչ, գեղադէմ, խարտեաշ, հասակաւոր, կապոյտ աչքերով երիտասարդուհի մըն էր: Ընդունեցի զինք գրասենեակս եւ խնդրեցի, որ նստի: Բժշկական թղթածրարը ամբողջացնէլէ ետք գիտցայ Կիւլայտընին տարիքը, ազգութիւնը եւ ընդհանուր առողջական վիճակը: Ան ուրեմն թուրք մըն էր: Կիւլայտըն ընդմիջելով՝ ըսաւ.

- Տոքթ. Հարպոյեան, ես մեծ վստահութեամբ եկած եմ ձեր քով, լսեցի ձեր ազնւութեան, խղճամտութեան, բարեսրտութեան եւ բժշկական հմտութեան ու կարողութեան մասին: Վստահ եմ, որ ձեր ախտաճանաչումը ընէլէ ետք զիս պիտի բուժեք, եւ պիտի չքանան առողջական ղըժարութիւններս, ու պիտի վերագտնեմ առողջութիւն: Ձեզի պէս հայ դեղագործ բարեկամ մը ունիմ իմ գործիս պատճառով: Ան յանձնարարեց, որ ձեզ տեսնեմ: Կ'աշխատանք թրքական նաւային փոխադրական ընկերութեան մէջ՝ որպէս քարտուղարուհի:

- Շնորհակալ եմ քու վստահութեան եւ ազնիւ խօսքերուն համար: Բայց ի՜նչ է զանգատող, օրիո՞րդ Կիւլայտըն:

- Ես քիթի շնչառութեան դժուարութիւն ունիմ, քիթէս հանգիստ չեմ շնչեր, ստիպուած՝ բերնէս կը շնչեմ, քնանալու ընթացքին բերանս բաց կը քնանամ եւ կը խռակ:

- Քիթի հարուած ունեցա՞ծ ես եւ քանի՞ տարիէ ունիս այս բոլոր դժուարութիւնները:

- Մանկութեանս ինկած եմ քիթիս վրայ եւ տաք տարիէ ունիմ այս դժուարութիւնները:

Հրաւիրեցի զինք քննութեան սենեակ, ուր զինք քննէլէ ետք կատարեցի ախտաճանաչումս ու խօսքս իրեն ուղղելով՝ ըսի.

- Ազնի՛ւ օրիորդ Կիւլայտըն, դուն քիթի մտահոգիչ հիւանդութիւն մը չունիս, սակայն քիթդ մասնակի խցուած է միջնեպատի (septum) ծուռութեամբ եւ երկու ցցօսներով (polyp), անոնց պատճառով է քիթդ շնչելու դժուարութիւնը: Հարց չէ, վիրաբուժական գործողութեամբ շնչառութիւնը բնական կը դառնայ, բերանդ գոց կը քնանաս եւ խռկալդ կը նուազէ: Վիրահատումը պիտի կատարուի իմ ձեռքերով, դուն քնացած եւ զգայագերծուած պիտի ըլլաս, ոչ մէկ բան պիտի գգաս: Չգայագերծող բժիշկը պիտի քնացնէ քեզ, ան ալ շատ ազնիւ եւ փորձառու բժիշկ մըն է, ան ալ հայ է ինծի պէս եւ անուրը Յարութիւն Նիկոլեան է: Երեք օր հիւանդանոց մնալէ ետք տուն պիտի երթաս, եւ շաբաթ մը ետք քեզ տեսնելու պատիւը պիտի ունենամ դարմանատանս մէջ:

- Միտով, տոքթո՛ր, պատրաստ եմ ձեր խնամքին յանձնուելու:

Երկու օր ետք արդէն Կիւլայտըն հիւանդանոց ընդունուած էր: Վիրահատումի նախապատրաստական քննութիւնները՝ արեան եւ մէզի քննութիւններ, թոքերու նկարումը եւ սրտագրութիւնը (electrocardiogram-EKG) կատարուած էին նոյն օրը, որոնց արդիւնքները բնական սահմաններու մէջ էին, եւ արգելք մը չկար բժշկական գործողութեան: Յաջորդ օր Կիւլայտըն գործողութեան սենեակն էր՝ պատրաստ վիրահատումի: Հոն կար զգայագերծող հայ բժիշկը՝ տոքթ. Յարութիւն Նիկոլեանը եւ օգնական հայ բուժ-բոյրը՝ Վարդուհին: Կիւլայտընին ներկայացուցի տոքթ. Յարութիւն Նիկոլեանը եւ բուժբոյր Վարդուհին եւ իմացուցի, որ Վարդուհի թրքերէնով կիւլ կը նշանակէ: - Ուրեմն շրջապատուած եմ երեք ազնիւ հայերով, որոնք իրենց կարելին պիտի ընեն, որ ես հանգիստ շնչեմ: Շնորհակալ եմ կանխաձեռ երեքեւն, եւ ի՜նչ զուգադիպութիւն, որ անունս եւ բուժբոյժ անուրը նոյն իմաստը ունին, ասիկա մեծ բախտաւորութիւն է:

Տոքթ. Յարութիւն Նիկոլեանը քանի մը հարցումներ ուղղեց հիւանդին եւ տեղեկանալի ետք, որ ան ընդհանրապէս դեղերու դէմ գերզգայութիւն չունէր, նախապէս ընդհանուր զգայագերծումի ենթարկւած էր եւ թոքերու ու սրտի հիւանդութիւն չէր ունեցած, սկսաւ հիւանդը անգիտակից դարձնել եւ զգայագերծել: Կիւլայտընին բերանը բանալով՝ ներխաչափողային կերպընկալ խողովակ մը ներմուծեց անոր խոչափողը եւ թթուածին հայթայթող խողովակը միացուց կերպընկալ խո-



ղովակին: Մինչ այդ եւ եւ բուժբոյրը հագած էինք վիրաբուժութեան յատուկ կահաչ տաբատ ու շապիկ եւ մեր ձեռքերն ու բազուկները մինչեւ արմուկ հականեխիչ օժառ-ջուրով լուացած էինք հիկզ վայրկեան եւ կը սպասէինք տոքթ. Յարութիւն Նիկոլեանին արտօնութեան՝ սկսելու համար գործողութիւնը:

- Տոքթ. Կարախ'ս, կրնաս սկսիլ, հիւանդը կատարեալ զգայագերծուած է եւ անգիտակից, մշիկ-մշիկ կը քննալայ:

Ուստի սկսայ գործողութիւնը լաւ տրամադրութեամբ: Կիւլայտընին քիթին միջնապատին ծուռութիւնը շտկելէ ետք վիրահատեցի քիթին մէջ գտնուած երեք ցցօսները եւ քիթին երկու խորշերուն մէջ թիւմեցի մանր վիրակապէտ, որպէսզի քիթի արինահոսութիւն տեղի չունենար: Գործողութիւնը հեզասահ կերպով ընթացաւ՝ առանց որեւէ մէկ բարդութեան: Վիրահատումի ընթացքին տոքթ. Նիկոլեան խօսքը ինծի ուղղելով՝ ըսաւ.

- Ի՜նչ է, տոքթ. Հարպոյեան, հիւանդը թրքուհի է եղեր, ուրկէ՞ որ ան ձեռքդ ինկաւ, փայլուն կտոր մըն է...

- Աւելորդ պակաս մի՛ խօսիր տոքթ. Նիկոլեան: Ուշադրութիւնդ կեդրոնացուր հիւանդին վրայ: Ան դիմած էր ինծի հայ վիրագործի մը յանձնարարութեամբ:

Տոքթ. Նիկոլեան քիթին տակէն բաներ մը մըմրաց, բայց ես չհասկցայ:

- Տոքթ. Նիկոլեան, գործողութիւնը վերջացաւ, իմ պարտականութիւնս լիովին կատարեցի, հիմա կրնաս արթնցնել հիւանդը, զգայագերծումէ դուրս երեցի:

Պատասխանը ուշացաւ եւ յանկարծ պոռթկալով՝ ըսաւ.

- Պիտի չարթնցնե՞մ, զգայագերծումէ դուրս պիտի չբերե՞մ, թող սատկի-երթա՛յ, ի վերջոյ թուրք մըն է եւ Յայոց ցեղասպանութիւնը կատարողներէ մէկուն թոռնիկը կամ ծոռն է: Միրելի՛ Կարախ'ս, վստահ եմ, որ իմ եւ քու մեծ հայրերը Ցեղասպանութեան ընթացքին սպաննուած եւ այսպիսի անուշիկ աղբիւններու մեծ հայրերին ձեռքով: Անոնք մէկ ու կէս միլիոն հայ սպաննեցին: Երկու հարիւր հազարէ աւելի հայ մանուկներ որբացան եւ ստեղծուեցաւ հայ որբաշխարհը: Թուրքերը գրաւեցին զաղթական հայերուն տունները, հողերը, քանդեցին մշակոյթի կեդրուները, քար ու քանդ ըրին հազարաւոր եկեղեցիներ: Ուստի ձգէ՛, որ չարթնցնեմ Կիւլայտընը, այսպիսով ես ալ իրենցմէ մէկը կարագորած կ'ըլլամ:

Անանկկալի եկած՝ ապշահար մտիկ կ'ընէի տոքթ. Նիկոլեանը: Կիւլայտըն մշիկ մշիկ կը քննաւար, իսկ բուժբոյրը ոտքի կայնելու կարողութիւնը կորսնցուցած էր եւ նստած էր աթոռի մը վրայ: Վիրահատութեան ձեռնոցներս հանեցի եւ խելագարուած տոքթ. Յարութիւնին խօսքերէն կը քալէի սենեակին մէջ, կը խորիւղդաժէի, որ արե՞ծ՞ տոքթ. Նիկոլեանը լուրջ էր, եթէ գործադրէր իր մտածածը, ի՜նչ պիտի ըլլար անոր հետեւանքները, ո՞վ պիտի ըլլար պատասխանատուն այս արարքին, ի՜նչ, թէ՛ ես: Զար լռութիւն կը տիրէր սենեակին մէջ: Տոքթ. Նիկոլեան անշարժ աչքերը վրաս սեւեռած՝ կը նայէր ինծի ու կը սպասէր իմ հակադարձութեան: Հանդարտ եւ մեղմ ձայնով ըսի.

- Միրելի՛ Յարութիւն, կը խնդրեմ՝ արթնցուր հիւանդը, չեմ արտօներ, որ այդպիսի ոճիւր մը գործես:

- Ան թուրք մըն է ի վերջոյ:

- Սակայն մի՛ մոռնար, որ այսօր ան հիւանդ մըն է, անմեղօրէն եւ վստահութեամբ եկած է բժշկուելու հայ բժիշկի մը քով: Խելացի մտածե եւ խնելութիւն մի՛ ըներ: Մի՛ մոռնար, որ ան իմ հիւանդս է, եւ ես պատասխանատու եմ: Կը հասկընեմ ընդվզումը եւ պոռթկումը: Մի՛ մոռնար, որ դուն կատարած ես սրբազան երդում մը՝ Զիփոկրատի ուխտը եւ շատ լաւ կը հասկնաս այդ ուխտին իմաստը: Այդ ուխտին համաձայն, դուն եւ ես պետք է դարմանենք մեզի դիմող բոլոր հիւանդները՝ առանց կրօնի, ազգութեան, գոյնի եւ տարիքի խտրութեան:

ԲԺԻՇԿ ԿԱՐՊԻՍ ԶԱՐՊՈՅԵԱՆ

Շար.ը՝ էջ 6

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ ԱՐՄՈՐԸ ԵՒ ՄԱՀԸ



Խորհրդային իշխանութիւնը ի զուր փորձեց իւրացնել Մ. Նալպանտեանի գործը, որովհետեւ Նալպանտեան, յառաջադէմ գաղափարներով տոգորւած, գրած էր «Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ»-ը ու կը քարոզէր հաւաքական աշխատանք: Նշեալ երգը Նալպանտեան տպագրեց 1862-ին, արտասահմանի ազատ պայմաններու մէջ, երբ այցելեց Կ. Պոլիս, Փարիզ, Լոնտոն եւ Յոլկաստան: Լոնտոնի մէջ ան յարաբերութիւններ հաստատեց ռուս տարագիր յեղափոխականներու հետ:

Նոր Նախիջեանի գաղութին համար հնդկահայերուն կողմէ եղած կտակի գործով մըն էր, որ Նալպանտեան արտասահման գտնուած էր 1860-ի յունիսէն մինչեւ 1862-ի մայիսը: Հագիւ իր առաքելութիւնը աւարտած՝ Նոր Նախիջեան կը հասներ, ուր ձերբակալուեցաւ ռուս ոստիկանութեան կողմէ: Փէթերսպուրկի մէջ բանտարկուեցաւ եւ դատուեցաւ: Ռուս յեղափոխականներէն Բակունինի գրած նամակը առիթ տուած էր ձերբակալութեան: Նալպանտեանի մօտ գտնուած էր նաեւ Կ. Պոլսոյ «Մեղու» թերթի խմբագիր Յարութիւն Սվաճեանի նամակը՝ ծածկագիր բառացուցակով միասին:

1862 յուլիս 14-էն մինչեւ 1865 մայիս 14 Փէթերսպուրկի մէջ բանտարկուելէն ետք, Մ. Նալպանտեան կ'աքսորուի Սիպիր եւ կը մնայ ոստիկանութեան խիստ հսկողութեան տակ:

Նալպանտեանի առողջութիւնը խանգարուած էր արդէն: Ան կը մահանայ թոքախտէ, 1866 մարտ 31-ին: Կը թոյլատրուի, որ անոր մարմինը փոխադրուի իր ծննդավայրը՝ Նոր Նախիջեան:

Այդ առիթով ռուս ոստիկանութիւնը կը տեղեկագրէ. «Նոր Նախիջեանում դազալը դիմադրել են արտասովոր յաղթահանդետով ու յարգանքով, սուրբերի պատկերներով, խաչկառներով, երաժշտութեամբ՝ քաղաքի համարեա թէ ամբողջ բնակչութեան մասնակցութեամբ: Այսպ դիակը փոխադրուած է հայոց Ս. Խաչ վանքը՝ քաղաքից հիկզ վերստ հեռաւորութեան վրայ եւ՝ այնտեղ թաղուած, թէեւ այդ վանքում ոչ ոքի չէն թաղում: Վանքի վարդապետը դամբանական ճառում հանգուցեալին անուանել է անմեղ նահատակ: Նոր Նախիջեանի նախին քաղաքագլուխ ծերունի Խալիբովը (Յարութիւն Խալիբեան, Նալպանտեանի կատարղի հակառակորդը) գտնում է, որ Նրա աճիւնին մատուցուած մեծարանքը ցոյց է կանավարութեան դէմ»:

Նալպանտեան նկատուեցաւ առաջին յեղափոխական հայ գործիչը, որ կը նահատակուէր ռուս բռնակալութեան կողմէ: Իր աքսորն ու մահը ունեցան խորհրդանշական բնոյթ:

Իբրեւ օրինակ, յիշենք Թիֆլիսի նահանգապետի դիւանատան զաղտնի բաժնին 1874 մայիս 1-ի թըղթածրարէն հատուած մը, ուր կը խօսուի հայ ժողովուրդին մէջ տարածուած Նալպանտեանի լուսանկարներուն մասին.

«Փոխաքցայի ականջն է հասել, որ վերջին ժամանակներս Երեւանում տացցում են երիտասարդ հայերի անունով հայ գրող Նալպանտեանի լուսանկարները, որ յինական թուականներին իւր ազատամիտ հակապետական գրուածքների համար աքսորուած է եղել Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը, որտեղ եւ շատ ժամանակ չէ, որ վախճանել է, որ այդ լուսանկարներն ամբողջովին գրտած են դրուստական մակագրութիւններով Կամիշին երախտի մասին, օրինակ՝ «հայրենիքի փրկիչ» եւ այլն, եւ որ դրանք գտնուել են Էջմիածնի վանքի վարդապետների խցերում, իսկ Թիֆլիսում դրանք ձրի բաժանում են երիտասարդներին ու դպրոցներում շրջանաւարտ հայ աշակերտներին»:

Նալպանտեան Կ. Պոլիս այցելած ատեն մտերմութիւն հաստատած էր հայ ազգային գործիչներու, մասնաւորապէս «Մեղու»-ի խմբագիր Յարութիւն Սվաճեանին հետ: Այս թերթը, Նալպանտեանի ձերբակալութեան մանրամասնութիւնները տալով (1862, «Մեղու», թիւ 172, էջ 197-199), կը թուէ անոր արժանիքները եւ կ'աւելցնէր. «Ոչ ոք գիտէ Նալպանտեանին յանցանքը, բայց մենք կը կարծենք, թէ գիտենք անոր յանցանքը՝ չափազանց եւ երախտագին ազգասիրութիւնն ու ճշմարտախօսութիւնն է, եւ ասոր համար չենք կարծեր, որ արդարութիւնը զինք պատժապարտ վճռէ, բայց եթէ արդար

«ՊԷՏԲ Է ՁԵՐԲԱԶՏԱՌԻԼ ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹԵՆԷՆ, ՈՐՈՒՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ . . . »

Շարունակում Ա. Էջեւ

ՅԱԿՈԲ ՏԵՐ ԽԱԶՏԱՌԻՇԵԱՆ.- Ճիշդ էք, որ այսօր տիրապե-տող օրակարգը Հայաստանի Ազգային ժողովի արտակարգ ընտրութիւններն են, ճիշդ էք նաեւ, որ արցախեան պատերազ-մէն անմիջապէս ետք մենք կարողացանք համախմբել ընդդի-մադիր ուժերը եւ ստեղծել «Հայրենիքի փրկութեան շարժում»-ը, որ առաջին հերթին կը նախատեսէր Նիկոլ Փաշինեանի եւ իշ-խող ապազգային ու հողատու խումբին հեռացումը. այս իշխա-նութիւնը աղետալի պարտութեան առաջնորդած է ժողովուրդը, ինչպէս նաեւ այս վերջին երեք տարիներուն ցոյց տուած է, որ ապիկար կառավարական **մեքանիզմով** եւ առհասարակ հարցե-րուն անլուրջ մօտեցումով Հայաստանը տկարացուցած է, եւ մանաւանդ ամենէն ցած մակարդակի հասցուցած Հայաստան-Ռուսիա եւ Հայաստան-Իրան յարաբերութիւնները, կացութիւն մը, որ չօգնեց պատերազմի յաջող ելքի ապահովման:

Եւ զարմանալի չէ ուրեմն, որ այս իշխանութեան պատճառով էր, որ հայրենիքը ապրեցաւ Հայաստանի նորագոյն անկախու-թեան ամենէն աղետալի էջերը՝ կորսնցնելով Արցախի մեծ մա-սը: Թշնամին տիրացաւ ազատագրուած հողերուն մեծ մասին, նոյնիսկ՝ Հատրութին եւ հասաւ մինչեւ Շուշի: Այս իշխանութիւ-նը կը կրէ պարտութեան ամբողջ պատասխանատուութիւնը եւ մեզի համար իսկապէս անընդունելի է, որ պարտուած ու իր էու-թենէն պարպուած ղեկավարութիւն մը տակաւին ամէն գնով յա-մառի կառչիլ իշխանութեան, երբ ինք յստակօրէն պատասխա-նատուն է այս մեծագոյն աղետին:

«Հայրենիքի փրկութեան շարժում»-ը նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներուն մեծ թիւով ժողովուրդ համախմբեց հաւաքներով եւ ցոյցերով արտայայտելու իր ցատումը, բողոքն ու պահանջը. նպատակը անյապաղ ու անցնցում կերպով այս իշխանութեան հեռացման ապահովումն էր: Անշուշտ շատ աւելի մեծ թիւ էր հարկաւոր այդ հեռացումը ապահովելու համար, բայց հասկնա-լի էր նաեւ, որ ժողովուրդը ցնցումի եւ յուսահատութեան մէջ էր, «Քորոնա» համավարակը տակաւին աւեր կը գործէր եւ կ'արգե-լակէր ցուցարարներու համախմբումը, իսկ ծմբան ամիսներն ալ կոտորեցին թափը. արդ՝ հաւանաբար արդար է մտածել, որ ամ-բողջումին չիրականացաւ մեր ձգտումն ու տեսլականը, այ-սինքն՝ «Հայրենիքի փրկութեան շարժում»-ի ճնշումի ալիքին տակ կառավարութեան փոփոխութիւն իրականացնելն էր, ապա կազմելը ժամանակաւոր կառավարութիւն՝ Վազգէն Մա-նուկեանի՝ ղեկավարութեամբ, որպէսզի կարելի ըլլայ նախ հանդարտեցնել ժողովուրդը, երկրորդ՝ անոր վերադարձնել իր կորսնցուցած յոյսը, երրորդ՝ մեղմացնել աղետին հետեւեւնքե-րը, եւ վերջապէս՝ կազմակերպել արդար ու թափանցիկ արտա-հերթ ընտրութիւններ: Բայց եւ այնպէս կասկած իսկ չունինք, որ «Հայրենիքի փրկութեան շարժում»-ին, ժողովրդային ճնշումնե-րուն, հաւաքներուն, բողոքի ցոյցերուն շնորհիւ է, որ իշխանու-թիւնը ստիպուեցաւ յայտարարել արտահերթ խորհրդարանա-կան ընտրութիւններու կայացումը, որպէսզի բոլորով ներկայա-նաւք ժողովուրդին՝ հնարաւորութիւն ստեղծելով, որ ան տայ իր վճիռը տեղի ունեցած զարգացումներուն լոյսին տակ:

«Ա.»- Եթէ նկատենք, որ անմիջական հրաժարականի տեսք չստացան այս պահանջներն ու բողոքի հաւաքները, այսօր ի՞նչ հանգամանքներ փոխուած են մտածելու, որ իշխանութիւննե-րու հեռացման համար անպայման կը գոյանայ ընտրական անհրաժեշտ զանգուածը:

Յ.Տ.Խ.- Նախ հաստատեմ, որ կասկած չկայ, թէ իշխանու-թիւնները փորձեցին ժամանակ գնել: Պատերազմի աւարտէն 1-1,5 ամիս ետք վարչապետ Փաշինեանն, երբ պարտութեան ան-միջական ցնցումի շրջանը բոլորեց, փորձեց ինքզինք վերագըտ-նել եւ հրապարակեց վեցամսեայ անկապ ծրագիր մը, որպէսզի արդարացնէ ինքզինք, ժողովուրդին մոռցնել տայ պատերազմի աղէտն ու իր անձնական պատասխանատուութիւնը եւ կեդրո-նանայ իր իշխանութիւնը վերարտադրելու վրայ: Իսկ առաջադ-րած իր այլ ծրագիրներէն ոչ մէկը իրականացուցած է: Ինչպէս միշտ, այս իշխանութիւնները շատ կը խօսին, քիչ կը գործեն, իսկ անոնց ճղճիմ իրագործումներն անգամ ընդհանրապէս սխալ ձեւով կը կիրարկու-ին: Արդ՝ անհրաժեշտ էր, որ մենք այդ ճնշումի մա-կարդակը եւ քաղաքացիական անհնազանդու-թեան թափը բարձր պահէինք, մնալով Սահմա-նադրութեան եւ օրէնքի ծիրին մէջ: Նպատակը ան-շուշտ Փաշինեանը բեմէն անցնցում եւ առանց մեծ ընդհարումներու հեռացնելն էր: Ճիշդ է, որ չհեռա-ցաւ, բայց գոնէ կարելի եղաւ հասնիլ այս փուլին՝ արտահերթ ընտրութիւններուն:

Ի՞նչն է կացութիւնը այսօր. նկատի ունենալով, որ արցախեան պատերազմի պարտութեան թուա-կանէն արդէն անցած է աւելի քան 7 ամիս, Նիկոլ Փաշինեան կրկին ամէն ճիգ ի գործ կը դնէ ժողո-վուրդին ուշադրութիւնը պատերազմէն շեղելու եւ վերադառնալու իր նախասիրած նիւթերուն եւ ապակողմորշիչ մօտեցումներուն՝ ժողովուրդին միջեւ բաժանարար գիծերու ստեղծումով, սեւ ու սպիտակի խնդիրի արծարծումով, նախկինները մեղադրելով, ատելութիւն սերմանելով եւ առհա-սարակ մթնոլորտը շիկացնելով: Մէկ խօսքով՝ այս իշխանութիւնները, հակառակ իրենց նախկին սի-րոյ եւ հանդուրժողութեան մթնոլորտ ստեղծելու խոստումին, իրենց գոյութեան ամբողջ ընթացքին գործեցին իբրեւ ատելութիւն եւ բաժանում սերմա-նող իշխանութիւն: Բայց եւ այնպէս պիտի ջլաջո-ղին, որովհետեւ մենք կարողացանք ներկայանալ իբրեւ իսկական այլընտրանք՝ «Հայաստան» դա-շինքի դիմագիծով:

«Ա.»- Հրապարակում վիճակագրութիւններն ալ արդէն կը խօսին այդ մասին՝ նշելով, որ «Զա-ղաքացիական պայմանագիր» կուսակցութեան առաջնորդին վարկանիշը անկում կ'արձանագրէ, իսկ անոր դիմաց «Հայաստան» դաշինքի վար-կանշային թիւերու աճ կը նկատուի:

Յ.Տ.Խ.- Վերջին բոլոր հարցախոյզները, ան-կախ թէ ովքեր են պատուիրատուները՝ իշխանա-կան ուժեր թէ ընդդիմադիր, ցոյց կու տան, որ կայ յստակ ընդհանրական գիծ մը. ստեղծուած են եր-կու մեծ բեւեռներ եւ Հայաստանի ժողովուրդին համար վարչապետի երկու հաւանական թեկնա-ծու կ'երեւի միայն՝ Նիկոլ Փաշինեանը, որուն կու-րօրէն կառչած կը մնայ զանգուած մը, հակառակ

անոր ամէն տեսակ ձախողութիւններուն եւ ստեղծած տազնա-պալի վիճակին, եւ կայ անոր ընդդիմացող նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեանը, որ կը ներկայանայ ԶՅԴ-ի եւ Վերածնունդ Հայաստանի հետ կազմուած դաշինքով: Այս բեւեռացումը ժողո-վուրդին համար երկու հիմնական ուժերուն միջեւ ընտրութեան կարելիութիւն պիտի ստեղծէ, իսկ մնացեալ ուժերը երկրորդա-կան, բայց կարեւոր դերակատարութիւն պիտի ունենան, մա-նաւանդ եթէ միակցական (**ընսլիսիոս**) կառավարութիւն կազ-մելու հարց յառաջանայ, երբ առաջին փուլին խորհրդարան մտնեն 2-3 այլ ուժեր եւս. իսկ եթէ կառավարութիւն չկազմուի եւ ընտրական երկրորդ փուլի անհրաժեշտութիւն ծագի, այդ ուժե-րն ոմանք կրնան կրկին համախմբուիլ երկու գլխաւոր խմբա-ւորումներուն շուրջ եւ ազդել ընտրութեան արդիւնքին վրայ:

Որքան ժամանակը կը թաւալի, այնքան ի յայտ կու գայ սնանկութիւնը այս իշխանութեան, եւ Փաշինեանի խայտառակ յայտարարութիւնները միայն շփոթ եւ ափսոսանք կը ստեղծեն՝ պատճառ դառնալով անոր վարկանիշի անկման:

Վերջին հարցախոյզերու տուեալներուն համաձայն, ճիշդ է, որ «Քաղաքացիական պայմանագիր»-ի վարկանիշը կը նահան-ջէ, իսկ «Հայաստան» դաշինքինը կը բարձրանայ, բայց եւ այն-պէս պետք է ըլլալ զգուշ, որովհետեւ որեւէ վայրկեանի Հայաս-տանի մէջ կացութիւնը կրնայ կտրուկ փոփոխութեան ենթար-կուիլ: Յառաջիկայ օրերուն ճակատագրական է, որ պահենք քարոզարշաւի թափը եւ ժողովուրդին յստակօրէն բացատրենք մեր ընտրական ծրագիրի առաջադրանքները, որպէսզի ընտ-րողները կերոնանան իսկական հարցերուն վրայ եւ տեսնեն, թէ մենք ինչպէ՛ս կը պատկերացնենք ապագան, երբ գործէ վճռական, փորձառու եւ ամուր գաղափարական հիմք ունեցող ղեկավարութիւն մը, որ կը ձգտի Հայաստանը վերածել ուժեղ եւ կայուն պետութեան:

«Ա.»- Կը նախատեսե՞ք երկրորդ փուլ. խնդրեմ նաեւ որոշ պարզաբանում տալ նաեւ ընտրական օրէնագիրքին ճշդած այս բաժնին մասին: Ե՞րբ կ'ըլլայ երկրորդ փուլը, ո՞վքեր կը մաս-նակցին եւ ի՞նչ համեմատութիւններ նկատի կ'առնուին խորի-դարանէն ներս թիւերու տեղաբաշխումի առումով:

Յ.Տ.Խ.- Երկրորդ փուլի անհրաժեշտութիւն կրնայ ծագիլ, եթէ առաջին փուլով խորհրդարան անցնող կուսակցութիւնները չկարողանան կազմել կառավարութիւն: Եթէ կարելի չըլլայ կազմել միակցական կառավարութիւն յստակ ժամկետներու մէջ, կը կազմակերպուի երկրորդ փուլը, որուն կը մասնակցին միայն երկու առաւելագին քուէ ստացած յառաջատար ուժերը, անոնց հնարաւորութիւն տալով նաեւ ներառելու այլ խմբաւո-րումներ եթէ յարմար նկատեն: Երկրորդ փուլին, մեծամասնու-թիւն ստացող խմբաւորումը կը ձեւաւորէ կառավարութիւնը. իսկ եթէ Ազգային ժողովի մեծամասնութիւնը փոքր է (օրինակ 50 կամ 51 տոկոս), ընտրական օրէնքով յաւելեալ աթոռներ կը տրուին յաղթող կողմին, որպէսզի գոյանայ 54 տոկոսի կայուն մեծամասնութիւն: Թե՛ւ Ազգային ժողովը աթոռներու նուազա-գոյն թիւը ճշդուած է (101 + 4 փոքրամասնութիւններու վերա-պահուած աթոռներ), սակայն ընդհանուր թիւը կը բարձրանայ կայուն մեծամասնութիւն ստեղծելու կամ ընդդիմութեան ընդ-հանուր տոկոսը ապահովելու հաշուարկումով:

Այս ընտրութիւններուն կայ հաւանականութիւն երկրորդ փուլի, բայց ամէն ինչ կախեալ է անկէ, թէ առաջին փուլով ո՞ր ուժերը կը մտնեն խորհրդարան, այդ ուժերէն որո՞նք պատրաստ են իրարու հետ գործակցելու, որպէսզի ստեղծուի միակցական կառավարութիւն. անշուշտ եթէ «Հայաստան» դաշինքը կամ «Քաղաքացիական պայմանագիր»-ը առանձնապէս չկարողա-նան ստանալ մեծամասնութեան քուէներ:

(Շար. 1)

ՀԱՐԻՐԻ «ԲՈԼՈՐ ԸՆՏԲԱՆՔՆԵՐԸ ԱՌԿԱՅ ԵՆ . . . »

Շարունակում Ա. Էջեւ

«Նիստին ընթացքին տեղի ունեցաւ շինիւ եւ կարեւոր քննարկում: Երկիրը կը դիմագրաւէ տնտեսական եւ քաղա-քական հետզհետէ վատթարացող վի-ճակ: Ես յանձնառու կը մնամ հայրենի-քին, հանրապետութեան միւլֆօթին եւ խորհուրդին նկատմամբ, իսկ ի վերջոյ մեզի համար կարեւորը հայրենիքն է: Քննարկումները այս շրջագիծին մէջ տեղի ունեցան, եւ աւելի ուշ կարելի է խօսիլ այս մասին», ըսաւ Հարիրի մեկ-ունսի պահուն:

Իր կարգին, Իսլամ հոգեւորական-ներու գերագոյն խորհուրդի Նիստէն բխած հաղորդագրութիւնը կը նշէ, որ խորհուրդը պիտի չարտօնէ, որ նշա-նակեալ վարչապետին իրաւասութիւն-ներուն դէմ ոտնձգութիւններ կատար-ին՝ աւելցնելով, որ խորհուրդը կը զօ-րակցի վարչապետին իրաւասութիւն-ներուն՝ սահմանադրութեան հիման վրայ:

Նշենք, որ Հարիրի շաբաթ երեկոյ-եան Կեդրոնական Պետութի իր քնա-կարանին մէջ հանդիպում մը ունեցաւ նախկին վարչապետներ Ֆուատ Սի-



նիորայի, Թամմամ Սալամի եւ Նեժիպ Միջաթիի հետ:

Հանդիպումին ընթացքին քննար-կուեցան քաղաքական իրադարձու-

թիւները, ինչպէս նաեւ երկրին մէջ տիրող ընդհանուր իրավիճակը, յատ-կապէս Լիբանանի նոր կառավարու-թեան կազմութեան մանրամասնու-թիւնները:

Միւս կողմէ, Հարիրի հարցազրոյցի մը ընթացքին հաստատեց, որ բոլոր ընտրանքները առկայ են, սակայն ինք այդ ընտրանքներէ մէկը առանձինն պիտի չընտրէ, այլ՝ խորհրդարանի նա-խագահ Նեպիի Պըրրիի, Իսլամ հոգե-ւորականներու գերագոյն խորհուրդին եւ նախկին վարչապետներուն հետ համադրելով:

Հարիրի ընդգծեց, որ ինք կառչած կը մնայ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի նախաձեռնութեան՝ նկատի ունենալով, որ անկիւս ուղղա-կիօրէն ազդուած է Ֆրանսայի նախա-գահ Էմանուէլ Մաքրոնի ծրագրած փրկութեան նախաձեռնութենէն, որ երկիրը կրնայ փրկութեան հասցնել:

Պըրրիի հետ իր յարաբերութեան անդադառնալով՝ Հարիրի ըսաւ, որ Սաատ Հարիրի կը նշանակէ Նեպիի Պըրրի եւ Նեպիի Պըրրի կը նշանակէ Սաատ Հարիրի՝ աւելցնելով, որ հիմ-նական հարցը կը կեդ-րոնանայ անոր վրայ, որ կառավարութեան կազմութեան հոլովոյթ-ը յապաղեցնող ար-գելքներ կը գետնդէ: Հարիրի հաստա-տեց, որ Պըրրի միակ անձնաւորութիւնն է, որ զինք չէ լքած, այլ միշտ զօրակցած է իրեն: Ան նշեշտեց, որ ինք մնալուն կ'ապի մէջ է Պըրրիի հետ եւ մօտիկ ապագային պիտի այցե-լէ խորհրդարանի նախագահին:

ՔՈԶԱՐԵԱՆԻ ԱՌՅԱՆՅ ՀՆԱԴԻՊՈՒՄԸ...

Շարունակում Ա. Էջեւ

Մինչ այդ, հանդիպումներու եւ քննարկումներու ծիրին մէջ ուրբաթ, 11 յունիս 2021-ին, Հայաստանի երկրորդ նախագահ, «Հայաստան» դաշինքի առաջ-նորդ Ռոպերթ Քոչարեան տեսակապով քննարկում ունեցած է 12 երկիրներէ (Միացեալ Նահանգներ, Զանատա, Ֆրանսա, Գերմանիա, Անգլիա, Իրան, Լի-բանան, Ռուսիա, Քուէթ, Արաբական Միացեալ Էմի-րութիւններ եւ այլն) հայ հասարակական-քաղաքա-կան գործիչներու, մտաւորականներու, գործարար-ներու հետ: Քննարկումին մասնակցած են շուրջ 240 հայրենակիցներ:



Քննարկումի հիմնական նիւթը եղած է արդէն երեք տարի դէպի Հայաստան ընդհատուած ներդրու-մային հոսքի վերականգնումը:

Քննարկում են նաեւ Հայաստանի առջեւ կանգ-նած ներկայ հիմնախնդիրներու, լուծման ուղիներու, հայրենիք-սփիւռք յարաբերութիւնները որակապէս նոր մակարդակի բարձրացնելու, Հայաստանի վե-րականգնման գործին մէջ սփւռքահայ մասնագե-տներու ներուժի օգտագործման, համահայկական օրակարգը ձեւաւորելու հարցերը:

Հանդիպումին մասնակից գործարարները Ռո-պերթ Քոչարեանի հետ պայմանաւորուած են 20 յու-նիսէն անմիջապէս ետք այցելել Հայաստան եւ տեղ-ւոյն վրայ քննարկել Հայաստանի մէջ ներդրումներ իրականացնելու ճանապարհային քարտեւը եւ առարկայական նախագիծեր:

Առջանց հանդիպումը կազմակերպուած էր ՀՅԴ Բիւրոյի նախաձեռնութեամբ:

15 ԳԵՐԻՆԵՐ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ...

Շարունակում Ա. Էջեւ

«Ես ուրախ եմ, որ իմ գործօն օժանդակութեամբ եւ մեր ռազմավարական գործընկեր Միացեալ Նա-հանգներու արտաքին գործոց նախարարի օգնական Ֆիլիփ Ռիքըրի մասնակցութեամբ՝ ազրպէյճանական կողմը ազատ արձանկեց տազնապի ընթացքին ձեռ-բակալուած 15 Հայաստանի Հանրապետութեան քա-ղաքացի եւ զանոնք Վրաստանի տարածքով վերա-դարձուց իրենց ընտանիքներուն:

«Մեր աշխուժ մասնակցութիւնը կարելիութիւն տուաւ նաեւ, որ հայկական կողմը ականապատուած տարածքներու վերաբերեալ կարեւոր նիւթեր յանձնէ ազրպէյճանական կողմին:

«Անձամբ ես անընդհատ կապի մէջ էի Ազրպէյճա-նի Հանրապետութեան նախագահ Իլիամ Ալիեւի եւ Հայաստանի ներկայ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ:

«Յատկանշական է, որ մեր ռազմավարական գոր-ծընկերոջ՝ Միացեալ Նահանգներու աշխուժ մաս-նակցութեամբ եւ գործընթացին մէջ մեր զգալի ներ-գրաւումով, յատուկ քալլ կատարուած է Հարաւային Կովկասի շրջանին մէջ անվտանգութեան միջավայրի բարելւմման ուղղութեամբ:

«Ես կ'ողջունեմ մեր դրացի պետութիւններու այս որոշումը, որ պէտք է հիմքեր ստեղծէ շրջանին մէջ լարուածութիւնը մեղմացնելու եւ երկարաժամկետ հեռանկարի մէջ համագործակցութեան մթնոլորտ ստեղծելու համար:

«Մենք պատրաստ ենք ապագային, անհրաժեշ-տութեան պարագային եւ կարելիութեան սահմաննե-րուն մէջ օգնելու մեր գործընկերներուն եւ աշխուժօ-րէն ներգրաւուելու հոլովոյթներուն մէջ, նախ եւ առաջ մարդասիրական խնդիրներու լուծման գործին մէջ», կ'ըստի գրառման մէջ:

ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործոց նա-խարար Դաւիթ Չալաքիանի իր կարգին յայտնած է. «Վերջին 2-3 ամիսներու ընթացքին մենք աշխուժօրէն աշխատած ենք մեր գլխաւոր ռազմավարական գոր-ծընկերոջ՝ Միացեալ Նահանգներու հետ, որպէսզի մեր ջանքերը արդիւնք տան: Ես շատ ուրախ եմ, որ այսօր մենք ունինք նման արդիւնք, եւ անգամ մը ես կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել նախ եւ առաջ մեր ռազմավարական գործընկերներ Հայաստանի եւ Ազրպէյճանին, որոնք շատ լաւ գիտակցեցան, որ անհրաժեշտ է պատասխան քայլեր կատարել շրջա-նին մէջ երկարատեւ խաղաղութեան եւ կայունու-թեան հաստատման համար»:

Ան նաեւ աւելցուցած է, որ Վրաստանի վարչա-պետ Իրաքլի Դարիպաշվիլի 24-ժամեայ դրութեամբ կապ պահած է ամերիկացի գործընկերներու հետ:

«Վարչապետը աշխատած է 24-ժամեայ դրութե-ամբ եւ անձամբ մասնակցած է մեր գլխաւոր ռազմա-վարական գործընկեր Միացեալ Նահանգներու հետ բանակցութիւններու հոլովոյթին: Պատուիրակութիւ-նը, որ կը ղեկավարէր Միացեալ Նահանգներու ար-տաքին գործոց նախագահի օգնականի պաշտօնա-կատար Ֆիլիփ Ռիքըը, քանի մը օր առաջ հիւրընկա-լուեցաւ Թիֆլիսի մէջ:

Անկէ ետք Միացեալ Նա-հանգներու արտաքին գործոց նախարարու-թեան պատուիրակու-թիւնը մեկնած է շրջա-նի հասնելով թէ՛ Երեւան, թէ՛ ալ Պաքու, որմէ ետք դարձեալ վերադարձած է Թիֆլիս, եւ բանակցու-թիւնները արդէն այստեղ շարունակուած են», աւելցուցած է ան:

ԿՈՒԶՈՒԻ

Հ ա ս տ ա տ ու -թիւն մը կարիք ու-նի վարպետ կա-ղապարագործնե-րու (**թորւնճի**):
Դիմել՝ հեռ. 03-244967:

ԹՐՔՈՒՀԻՒՆ...

Շարունակում 4-րդ էջին

- Այո՛, սիրելի՛ Կարպիս, կը հասկնամ ըսածներդ, սակայն արիւն կ'եռայ, ականջներուս մէջ կը խօսի հիմա Ցեղասպանութեան մասին հօրս պատմութիւնները, աչքիս առջեւ են Ցեղասպանութեան ընթացքին հայ գարթական զանգուածներու խղճալի վիճակը, թափառական երեխաներու, ծերուկ մայրերու եւ հայրերու տառապանքը, հայ աղջիկներու ամեանգումները եւ թուրք հարեմներուն մէջ անոնց բռնաբարումը:

- Սիրելի՛ Յարութիւն, ես ալ կը վերլիշեմ գաղթականութեան ընթացքին վերապրող հօրս ապրած դժոխային եւ ողբերգական կեանքն ու արհաւիրքը: Յայրս ականատես եղած է հօրը, երկու եղբայրներուն եւ երեք հօրեղբայրներուն չարչարանքով սպաւնութեան՝ դահիճ թուրքերուն ձեռքով, ինչպէս նաեւ հօրաքրոջը տղուն խեղդամահ ըլլալուն՝ Եփրատ գետին մէջ, թուրք զինեալներուն կողմէ: Այս բոլորը պիտի չմոռնանք, միշտ պիտի յիշենք եւ պիտի յիշեցընենք ամբողջ աշխարհին ու պիտի մնանք պահանջատեր:

- Ուրեմն շատ լաւ առիթ մըն է այսօր վրէժ լուծելու, ուստի պիտի չարթնցնեմ:

- Կը հասկնամ հոգեկան ապրումներդ, սիրելի՛ Յարութիւն, սակայն այս ձեւով ճիշդ չէ վրէժ լուծել, խելացի եղիր, արթնցո՛ւր սա թրջուհին եւ ետքը կը խօսիք վրէժ լուծելու ձեւերու մասին: Վատահ եմ՝ արդէն անդրադարձար, որ սխալ մտածումներու մէջ ես: Սիրելի՛ Յարութիւն, խելքի եկուր եւ վրէժդ լուծէ Կիւլայտընը արթնցնելով, անոր կեանք տալով. մասնաւանդ մի՛ մոռնար, որ վրէժդ լուծած կ'ըլլաս մասնակից դառնալով Յայ դատի աշխատանքներուն եւ նիւթական բաժինդ բերելով անոր ծրագիրներուն:

Տոքթ. Յարութիւն Նիկոլեանը հանդարտած էր, բայց աչքերը կարմրած էին: Երկու քայլով մօտեցաւ ինծի եւ մեղմ ձայնով ըսաւ.

- Կը ներես, Կարպի՛ս, պոռթկումիս եւ սխալ մտածումներուս համար: Ահա հիմա կ'արթնցնեմ Կիւլայտընը: Բժշկական բարոյական պարտականութիւնս լիովին կը կատարեմ՝ չմոռնալով Յիփոկրատի ուխտը: Վաղը ապրիլ 24 է. եկեղեցին կը տեսնուիք եւ քայլարշաւին միասին կը քայլենք:

Կիւլայտըն արթուն էր եւ արդէն կը գտնուէր վերակենդանացման սրահը: Ան գտած էր իր գիտակցութիւնը: «Ինչպէ՛ս ես, օրդ. Կիւլայտըն՝ հարցումիս պատասխանեց՝ «Շատ լաւ եմ, տոքթ. Յարպոյեան, շնորհակալ եմ»:

Տոքթ. Յարութիւն Նիկոլեանը վերակենդանացման սրահ եկաւ եւ արժեւորեց Կիւլայտընին արթնութիւնը եւսի քանի հարցում ուղղելէ ետք անոր, մօտեցաւ ինծի եւ ըսաւ.

- Սիրելի՛ տոքթ. Յարպոյեան, շատ կը ներես, այսօր քեզ նեղ կացութեան մատնեցի: Մեծապէս կը զնահատեմ համբերութիւնդ եւ խոհեմ կեցուածքդ: Վաղը կը տեսնուիք:

Հակառակ որ յաջորդ օրը Ապրիլ 24 էր, հիւանդա-

նոց հանդիպեցայ առաւօտուն եւ Կիւլայտընին քթախորշերուն պզտիկ վիրակապերը արտահանեցի: Զիթին միջնապատին ծռութիւնը անհետացած էր եւ երկու խորշերը բնական վիճակ ունէին:

- Վաղը կրնաս տուն երթալ, օրիո՛րդ Կիւլայտըն: Կ'ուզեմ քեզ տեսնել շաբաթ մը ետք, դարմանատանս մէջ:

- Շա՛տ լաւ, տոքթոր, կը տեսնուինք:

Կիւլայտըն յաջորդ օր ձգած էր հիւանդանոցը եւ վերադարձած էր իր տունը:

Ապրիլ 24-ին ես եւ տոքթ. Յարութիւն Նիկոլեանը ներկայ եղանք եկեղեցւոյ ոգեկոյման արարողութեան: Մասնակցեցանք քայլարշաւին եւ քալելու ընթացքին հանդարտօրէն երկար խօսեցանք թուրքերուն կատարած հայ ժողովուրդի ցեղասպանութեան մասին: Քայլարշաւի աւարտին ան դրամապանակէն դուրս հանեց քանի մը հարիւր տոլարնոց փոխգիր (check) մը՝ գրուած «ՀԱՅ ԴԱՏ»-ին եւ խընդրեց ինձմէ, որ այդ փոխգիրը հասցնէի Յայ դատի գրասենեակը:

- Տոքթ. Յարութիւն Նիկոլեան, շատ լաւ կ'ըլլայ, որ դուն անձամբ յանձնես այդ փոխգիրը Յայ դատի գրասենեակ: Ի՛նչ ազնիւ եւ խելացի որոշում մը տըլած ես: Յայ դատը այս նիւթական օժանդակութեամբդ շատ մեծ աշխատանքներ կրնայ իրականացնել: Ահա այս ձեւով վրէժդ լուծած կ'ըլլաս թուրքերէն: Եկո՛ւր՝ ճակտեղ համբուրեմ»:

Տոքթ. Յարութիւն Նիկոլեանին ճակտէն համբուրեցի, աչքերը արցունքով լեցուն էին:

- Պիտի խնդրեմ, որ մոռնաս Կիւլայտընին գործողութեան վերջաւորութեան իմ անտեղի եւ սխալ արտայայտութիւններս: Շնորհակալ եմ համբերութեանը, խելացի մօտեցումներուդ եւ գործնական առաջարկներուդ համար: Այդ փոխգիրը խղճիս պարտքն է:

Մենք բաժնուեցանք իրարմէ այդ օր փոխհասկացողութեամբ եւ ներողական ոգիով: Մենք շարունակեցինք տեսնուիլ երկար տարիներ հիւանդանոցի գործողութեան սենեակին մէջ: Մնացինք բարեկամ գործակիցներ: Ան շատ կարող զգայազերծող բժիշկ մնաց:

Կիւլայտըն գործողութենէ 15 օր ետք հանդիպեցաւ գրասենեակս: Եկած էր կարմիր վարդերու մեծ ծաղկեփունջով մը: Ողջագուրուեցանք եւ փորձեց ձեռքս համբուրել, անշուշտ չթոյլատրեցի: Ան գտած էր իր առողջութիւնը: Շատ զոհ էր քիթէն: Կը շնչէր միայն քիթէն: Չէր փռնգտար եւ գիշերները հանգիստ կը քնանար: Վիրահատութեան արդիւնքը բացայայտ էր: Կիւլայտըն գոհունակութեամբ մեկնեցաւ այդ օր: Ես ալ ուրախ էի, որ Կիւլայտըն ողջ առողջ էր:

Սոնրեալ, 5 մարտ 2021

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՂՄԸ ՈՐՈՇԱԾ Է . . .

Շարունակում Ա. էջին

Ըստ աղբիւրին, ամերիկեան կողմը նպատակ ունի Պայտըն-Փութին հանդիպումի ընթացքին հասկնցնել, որ Պայտընը ի տարբերութիւն Թրամփի բարի դրացիական մօտեցման, կարծր ազդանշաններ կը փոխանցէ Փութինին: Սպիտակ տունը յոյս ունի, որ ՕԹՃԱ-ի դաշնակիցներու հետ քանի մը օրուան հանդիպումներէ եւ քննարկումներէ ետք Փութինի հետ հանդիպումին եր-

թալը Մոսկուային ցոյց պիտի տայ Ռուսիոյ դէմ «միասնական ճակատ»-ի գոյութիւնը:

Աղբիւրին համաձայն, փորձագետները ամերիկեան վարչակազմին զգուշացուցած են, որ Փութինի հետ միացեալ մամլոյ ասուլիսը Պայտընի համար վտանգաւոր կրնայ ըլլալ, եւ արդէն յայտնի է, որ նախագահները անջատ մամլոյ ասուլիսներ պիտի ունենան:

ԸՆՏՐԵԼ ԿԱՅ...

Շարունակում 3-րդ էջին

Ու ան պէտք է նաեւ լաւ գիտնայ, որ ներկայ համակարգի փոփոխութեան պահանջը ո՛չ նախագահէն եւ ո՛չ ալ վարչապետէն կամ ընդդիմութենէն եւ կամ իշխանութիւնէն կախեալ է: Այլ՝ միայն իրմէ, ըստրող կամ քուէարկող քաղաքացիէն: Անկեղծօրէն կը կարծեմ, որ այս ընտրութիւնը ճակատագրական պիտի ըլլալ մեզի համար, որովհետեւ այսքան երկար ու շատ վնասկորուստներէ ետք, կը հաւատամ, որ ան պիտի կարենայ մեր երկրին վերադարձնել իր իրաւագգային դիմագիծը: Ու այս մէկը միայն կրնայ իրականանալ մեր հայրենի քաղաքացիին սթափումի ճիգով, անոր՝ մտքի նոր կոփումով, անոր՝ արդար ղեկավարի մը ճշգրիտ ընտրութեան ճամբով: Մէկ խօսքով՝ անոր հայու արդար խղճի ձայնէն ծնած բուռով:

Այս մասին օրին եւ միշտ խօսած, գրած, կարդացած եւ զրուցած ենք:

Բոլորս ալ վաղուան արդար իրականութեան կը հաւատանք: Նաեւ կը հաւատանք, որ մեր ժողովուրդը իր կենցաղով եւ արդարամտութեամբ պիտի կարենայ հաստատել այս անգամ

իր ինքնութիւնը: Սակայն ի՛նչ որ ալ ըսենք եւ ցանկանք, անիմաստ է, որովհետեւ նման մտքի շարունակութիւնը կախեալ է իրմէ՝ մի միայն հայրենի քուէարկող քաղաքացիէն:

Հաւատացե՛ք՝ երկար տարիներ եղած եմ լաւատես եւ կը ցանկամ մնալ այդպիսին, սակայն... այս մէկուն ներկայութիւնը ինձմէ կախեալ չէ: Սփիւռքը ուժեղ է, կ'ըսենք եւ կը կրկնենք, երբ հայրենիքն է գօրաւոր: Հազար անգամ շեշտած ենք այս վարկածը, անշուշտ, եթէ կարողացող կամ լսող եղած է:

Ու բոլորիս համար այս ընտրութիւնը եւական է, որովհետեւ անոր արդիւնքով կարելի պիտի ըլլայ որոշել աշխարհի ազատամիտ ու զարգացած ժողովուրդներու շարքին մեր գոյութեան շարունակութիւնը: Վերջ ի վերջոյ, ա՛յ կը բաւէ այսքան չարչարանք, զոյանք, նախատիք եւ ֆիզիքական ու հոգեկան կորուստ: Ժամանակն է, որ հայը վերադառնայ իր նախկին «պարիս»: Ու իբրեւ սփիւռքահայ՝ կ'աղօթեմ ու կը յուսամ, որ այս ընտրութիւնը պիտի իրականացնէ այս բաղձանքը:

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ...

Շարունակում 4-րդ էջին

Յ. Սվաճեան մօտէն ծանօթ էր Նալպաստեանին եւ միասին տարին արեւելահայ ու արեւմտահայ յառաջադէմ մտաւորականութիւնը կապելու աշխատանքը: Ռուս ոստիկանութիւնը, երբ ձերբակալեց Նալպաստեանը, անոր քով գտաւ Սվաճեանին նամակը, ուր կը խօսուէր Տաւրոսի ընթատութեան մասին:

Ն. Նալպաստեան եղաւ առաջին հայ գործիչը, որ սերտ կապ ստեղծեց արեւելահայ եւ արեւմտահայ յառաջադէմ մտաւորականութեան միջեւ: Անոր այցելութիւնը կը զուգարկաբէր Ազգային սահմանադրութեան շարժումին՝ ընդդէմ պահպանողական ու կղերամիտ հոսանքին: Արեւմտահայ գրականութեան մէջ այս թուականներուն է, որ Մ. Պէշիկթաշլեան կը գրէր իր հայրենասիրական տաղերը, իսկ Ծերենց՝ իր ազգային վէպերը, ոգեկոչելով Կիլիկիոյ անկախութիւնը:

Հայաստանի խորհրդայնացումէն ետք Մ. Նալպաստեանի նուիրումն ուսումնասիրութիւններ հրատարակուեցան, իսկ 1940-1949 չորս հատորներով լոյս տեսաւ անոր «Երկերի լիակատար ժողովածու»-ն, որ բոլորովին սպառեցաւ: 1953-ին տպագրուեցաւ 683 էջնոց գիրք մը՝ «Ընտիր երկեր» խորագրով:

Մ. Նալպաստեան մահացաւ աքսորի մէջ, եւ ինչպէս ռուս գաղտնի ոստիկանութեան տեղեկագիրը կ'ըսէ, աւելի մեծ ժողովրդականութիւն չափեցաւ մահէն ետք: Մերունդներ երգեցին անոր «Մեր հայրենիք»-ը եւ խանդավառութեամբ արտասանեցին «Ազատութիւն» քերթումածը, որուն ոգին կու գար հայոց դարաւոր պատմութենէն:

Մեր հայրենիք

**Մեր հայրենիք թշուառ, անտեր, մեր թշնամուց ոտնակոխ,
Իր որդիքը արդ կանչում է հանել իւր վրէժ, քէն ու ոխ:**

**Մեր հայրենիք շղթաներով այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով պիտի լինի ազատուած:**

**Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ, որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ, արտասուքով լուացի:**

**Ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտ մենէն
Բայց երանի՛, որ իւր ազգին ազատութեան կը մենէն:**



ԱՅՍՈՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ

Radio Voice of Van - Վանայ Ձայն FM: 94.7 Եւ 95 MHz

7.00 Զայլերգներ / Բարի լոյս
7.15 Սփիւռքեան հանդարտ երգեր
7.30 Բարեւ
8.30 Լուրեր
9.00 Բարեւ
10.00 Նոր երգեր
10.30 Հայկական աշխարհի լուրեր (ուղիղ դիմատեսրով)

10.45 Սփիւռքեան երգեր
11.00 Հայրենի սիրուած երգեր
11.30 Յաւելուած - Բաղաքական մեկնաբանութիւն

12.00 Օրուան հարցազրոյցը. հիւր՝ Շահան Գանտահարեան (**ուղիղ՝ դիմատեսրով**)

12.30 Խմբերգներ
1.00 Ազգային-հայրենասիրական երգեր

1.30 Լուրեր

2.00 Յիշատակելիները (Արցախեան նորօրէյա հերոսներ)

2.05 Յեղափոխական երգեր

3.00 Զըլ եմ պիոյմու. հիւր՝ Մարուն Ուաքիմ (**ուղիղ դիմատեսրով**)

4.00 Ժընտի

4.30 Օ.Թի.Վի.ի հայերէն լուրերու

ուղղակի սփռում
4.50 Խանդավառ երգեր
5.00 «Վանայ Ձայն»-ը երեկոյեան
5.05 Նոր երգեր
5.30 «Շողարձակ» հիւր՝ Լեւոն Իսկէնեան (Շողիկ Թորոսեանի հետ)

6.30 Լուրեր
6.50 Սփիւռքեան երգեր
7.00 Օրուան հարցազրոյցի կրկնութիւն

7.30 Խանդավառ երգեր

8.00 Օրուան երգիչ (Սրբուկ)

8.30 Լիբանանահայ երգիչներու կատարումներ

9.00 Հեղինակային երգեր

9.30 Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)

9.45 Եւրոատային երգեր

10.00 Ամուսններ եւ եղանակներ

11.00 Golden oldies

12.00 Յեղափոխական երգեր

2.00 Հեղինակային երգեր

3.00 Կրկնութիւններ

4.00 Հայերէն այլազան երգեր

6.00 Հայկական երաժշտութիւն

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՈՒ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Ափրիկեան երկիր - Վախ:
- Եղեսիոյ արդի անունը - Արական անուն:
- Ձայնանիշ - Եւրոպական մայրաքաղաք:
- Մէկ չորրորդական մաս - Յարաբերական դերանուն:
- Արցախի հնավայրերէն - Որոճացող կենդանի:
- Ֆանսական քաղաք - Չելիջ:
- Կապոցախ - Անորոշ դերանուն:
- Գէշ ճակատագիրի զոհ:
- Խրամ - Կրկնուած բաղաձայններ:
- Յուցական ածական - 1001 եկեղեցիներու քաղաքը - Կոնդիկ:
- Ժայռաւն - Ձիւրք, քանքար:

ՈՐՂԱՅԱՅԵԱՏ

- Յօրանալ - Ծաղկանց լեռնաշղթայի գագաթներէն:
- Շաղկապ - Կեռ - Բուրդ:
- Զրթմնջել - Իրերայաջորդ գիրեր:
- Մեկնի թուրքուցիչ հիւթը - Թլուատ:
- Ձայնանիշ - Բովանդակ:
- Ձայնակից տառեր - Կարծր քարատեսակ:
- Լիբանանի գետերէն - Սեմական ժողովուրդ մը:
- Ծառի կրճղ - Բաֆֆիի «Ոսկին»:
- Եղանակաւորիչ մակբայ - Ածականակերտ մասնիկ - Գթա՛:
- Ասիական մայրաքաղաք - Ածականակերտ մասնիկ - Անձնական դերանուն:
- Տեսութիւն - Ո՛չ հում, ո՛չ եփած (հակ.):

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

		9		7		8		4
			1				7	
3	2			4			6	
		5					8	
6				5	4	3		7
4	1							
	3		7			5		2
			8					
	2			6	1			

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւմակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւր 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր քառակուսի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍՔԵԹՊՈԼ

ԱՆԴՐԱՆԻԿ ՊԷՅՐՈՒԹ-ՀՄԸՄ ԱՆԹԻԼԻԱՄ՝ 61-59



Լիբանանի պասքեթպոլի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան 10-րդ հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ, երէկ՝ կիրակի, 13 յունիսին, ԶԲԸՄ-ի «Տեմիրճեան» կեդրոնին մէջ (Նաքքաշ) տեղի ունեցաւ Անդրանիկ Պէյրութ-ԶԲԸՄ Անթիլիաս մրցումը։

Անիկա աւարտեցաւ հիւրընկալ կազմին յաղթանակով՝ 61-59 արդիւնքով (19-13, 31-27, 43-51 եւ 61-59)։

Նշենք, որ Անդրանիկ Պէյրութ մրցումին վերջին երկվայրկեաններուն իր յաղթանակը կերտեց պազըր-պիթըրով։

Յարդ իր կատարած մրցումներուն ԶԲԸՄ Անթիլիաս, որ մրցում մը նուազ կատարած է, արձանագրած է 4 յաղթանակ եւ կրած 5 պարտութիւն։

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՀՄԸՄ ՊԷՅՐՈՒԹ-ՆԸԺՈՒՄ՝ 0-2

Լիբանանի ֆուբպոլի Գ. դասակարգի ախոյեանութեան 12-րդ հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ, երէկ՝ կիրակի, 13 յունիսին Նըժմէի դաշտին վրայ տեղի ունեցաւ ԶԲԸՄ Պէյրութ-Նըժմէ մրցումը։

ԶԲԸՄ-ի ներկայացուցչական կազմը, որ Նախորդ մրցումին յաղթանակ արձանագրած էր, երէկուան այս մրցումին չկրցաւ իր յաղթական ընթացքը շարունակել եւ իր մրցակիցէն կրեց 2-0 արդիւնքով պարտութիւն մը։

ՖՈՒԹՅԱԼ

ՀՄԸՄ ՊՈՒՐԳ ՀԱՄՈՒՏ ՅԱՂԹԵՅ ՅԱՌԱՋԱՏԱՐԻՆ ԵՒ ԱՆԿԷ ԽԼԵՅ ՊԱՐԱԳՒՈՒԽԻ ԴԻՐՔԸ



Լիբանանի ֆուբսալի Գ. դասակարգի ախոյեանութեան 4-րդ հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ, շաբաթ, 12 յունիսին, Եմիլ Լահուտի անուան մարզահամալիրին մէջ (Մար Ռուքոզ) տեղի ունեցաւ Կլոպըլ Եունիվերսիթի-ԶԲԸՄ Պուրճ Զամուտ գագաթի ճակատումը։

Անիկա աւարտեցաւ ԶԲԸՄ-ի տիւնամիջ կազմին յաղթանակով, որ 7-1 արդիւնքով պարտութեան մատնեց յառաջատարը։

Շաբ.ը՝ էջ 8

ԹԵՐՈՒՆՏՈ

ԱՄԻՈՅ ՖԵՏԵՐԱՄԻՈՆԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Ուրբաթ, 11 յունիսին, Ասիոյ թերուանտոյի ֆետերասիոնին Նախագահը՝ Քիօ Սիոք, հասաւ Լիբանան, անձամբ ներկայ գտնուելու համար Ասիոյ թերուանտոյի տղոց եւ աղջկանց ախոյեանութեան (սեւ գօտի), որ առաջին անգամ ըլլալով տեղի պիտի ունենայ Լիբանանի մէջ 14-18 յունիսին, «Նուհատ Նաուֆալ» մարզահամալիրին մէջ (Չուք Միքայէ)։

Պէյրութի միջազգային օդակայանին պատուոյ սրահին մէջ, Քիօ Սիոք դիմադրուեցաւ Լիբանանի թերուանտոյի ֆետերասիոնի Նախագահ Զապիպ Զարիֆիի կողմէ։

ՃԱՏՐԱԿ

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՅԱՋՈՐԴԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Հայրենի կրանտմասըըր Լեւոն Արոնեան երէկ՝ կիրակի, 13 յունիսին իր երկրորդ յաջորդական յաղթանակը արձանագրեց Ռուսիանիոյ մայրաքաղաք Պուրեթշի մէջ տեղի ունեցող «Կրանտ Չես Թուր»-ի «Սուվորապեա Չես Զլապիք» դասական ճատրակի մրցաշարքին։

Շաբ.ը՝ էջ 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՂԶԿԱՆՅ ԱՉԳԱՅԻՆ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ՅԱՂԹԵՅ ՂԱՋԱԽՍՏԱՆԻՆ

Վազգէն Սարգսեանի անուան հանրապետական մարզադաշտին վրայ, Նախանցեալ օր ֆուբպոլի միջազգային բարեկամական մրցումի մը ընթացքին Հայաստանի աղջկանց ազգային հաւաքականը հիւրընկալեց Ղազախստանը։

Մրցումը աւարտեցաւ հայրենի կազմին յաղթանակով՝ 2-1 արդիւնքով։

Հայաստանի կուլերը նշանակեցին Մարալ Արթին եւ Արմինէ Խաչատրեան։

Հայաստանի ֆուբպոլի ֆետերասիոնին մամլոյ քարտուղարութիւնը



յայտնեց, որ երեքշաբթի, 15 յունիսին, երկու կազմերը նոյն վայրին մէջ դարձեալ իրարու դէմ յանդիման պիտի գան։

ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՀԵՌԱՅԱՒ ՅԻՐԻԽԻ 21 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ ԽՈՒՄԲԻՆ ԳԼԽԱՒՈՐ ՄԱՐԶԻՉԻ ՊԱՇՏՈՆԷՆ

Հայաստանի ֆուբպոլի ազգային հաւաքականի Նախկին միջնապահ եւ Նախկին մարզիչ Արթուր Պետրոսեան հեռացաւ Ցիւրիխի (Չուիցերիա) 21 տարեկանէն վար խումբի գլխաւոր մարզիչի պաշտօնէն։

Չուիցերիական ակումբին մամլոյ քարտուղարութիւնը յայտնեց, որ անոր պայմանագրութեան ժամկետը հասաւ իր աւարտին։

Պետրոսեան, որ ծնած է 17 դեկտեմբեր 1971-ին, Գիւմրի (Լենինական) քաղաքին մէջ, 2016-2018 ժամանակամիջոցին գլխաւորած է Հայաստանի ազգային հաւաքականը։



ջոցին գլխաւորած է Հայաստանի ազգային հաւաքականը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԳԷՈՐԳ ՂԱԶԱՐԵԱՆ ՀԻՒՐԸ ԵՂԱՒ ՈՒՐԱՐՏՈՒՆ

Հայաստանի ֆուբպոլի ազգային հաւաքականի միջնապահ Գեորգ Ղազարեան երէկ հիւրը եղաւ Ուրարտու ֆուբպոլի ակումբին։

Ուրարտու ֆուբպոլի ակումբի պատանի ֆուբպոլիստները այս անգամ հիւրընկալեցին հայրենի հաւաքականի եւ յունական Լամիայի միջնապահ Գեորգ Ղազարեանը։

Փորձառու ֆուբպոլիստը վարպետութեան դաս տուաւ ակադեմիայի սաներուն, կիսեց իր գիտելիքները, ինչպէս նաեւ պատասխանեց անոնց հարցումներուն։



Հանդիպումին աւարտին Ղազարեան լուսանկարուեցաւ պատանի ֆուբպոլիստներուն հետ։

ՄԱՐԳԻՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՀԵՌԱՅԱՒ ԼՈՔՈՄՈԹԻ ՄՈՍԿՈՒԱՅԷՆ

Հայաստանի ֆուբպոլի ազգային հաւաքականի Նախկին ֆուբպոլիստ Սարգիս Յովհաննիսեան հեռացաւ Լոքոմոթիւ Մոսկուայի հիմնական խումբին մարզչական խմբակէն, այս մասին յայտնեց ռուսական ակումբին մամլոյ քարտուղարութիւնը։

Նշուեցաւ, որ անոր պայմանագրութիւնը աւարտեցաւ Լոքոմոթիւի հետ։

Ան 1994 թուականէն իբրեւ ֆուբպոլիստ մաս կազմած է Լոքոմոթիւին՝ անոր հետ դառնալով Ռուսիոյ բաժակակիր, փոխախոյեան եւ պրոնզէ մետալակիր։

Իսկ 2004-էն ի վեր մաս կազմած է Լոքոմոթիւի մարզչական խմբակին։



Նշենք, որ Յովհաննիսեան ընդգրկուած էր նաեւ Հայաստանի ֆուբպոլի ազգային հաւաքականի Նախկին գլխաւոր մարզիչ Արթուր Պետրոսեանի մարզչական խմբակին մէջ։

«ՌՈՒՆԱ ԿԱՐՈՍ»

ՉԵԽ ՊԱՐՊՈՐԱ ՔՐԵԺՄԻՔՈՎԱ ԵՒ ՍԵՐՊ ՆՈՎԱՔ ԳՈՔՈՎԻՉ ՏԻՏՂՈՍԱԿԻՐ՝ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Աղջկանց թենիսի աշխարհի միջազգային դասաւորման 33-րդ դիրքին վրայ գտնուող չեխ՝ Պարպորա Քրեժմիքովա Նախանցեալ օր հանդիսացաւ Ֆրանսայի թենիսի կրան շլէմի միջազգային բաց ախոյեանութեան («Ռոլան Կարոս») տիտղոսակիր, երբ աւարտական մրցումին 6-1, 2-6 եւ 6-4 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց Ռուսիոյ ներկայացուցիչ, 32-րդ դասուած Անասթասիա Փաւլիուշենքովայի դէմ։

Յաջորդաբար 6-րդ տարին ըլլալով այս մրցաշարքը ունեցաւ իր 6-րդ տարբեր ախոյեանը։

25 տարեկան Քրեժմիքովա, որ այսպիսով իր առաջին կրան շլէմի տիտղոսին տիրացաւ, կատարեց այլ իրագործում մըն ալ, երբ հանդիսացաւ աղջկանց զոյգի ախոյեան։



Ան Նախապէս այս իրագործումը կատարած էր 2018-ին, «Ռոլան Կարոս»-ի եւ Ռիմպալլեոնի մէջ։

Շաբ.ը՝ էջ 8

«ԵՒՐՕ-2020»

- ԴԱՆԻԱ ՊԱՐՏՈՒԵՑԱՒ ԵՐԻՔՍԸՆԻ ՈՒՇԱԳՆԱՅ ԸԼԼԱԼԷՆ ԵՏՔ - ԱՆԳԼԻԱ ՅԱՂԹԵՅ ԱՇԽԱՐՀԻ ՓՈԽԱՆՈՅԵԱՆԻՆ

Երէկ եւ Նախանցեալ օր Եւրոպայի ֆուբպոլի ախոյեանութեան՝ «Եւրո-2020»-ի ծիրին մէջ, կատարուեցան վեց մրցումներ։

Պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Եւրոպայի ախոյեանութեան աւարտական հանգըրանի մրցումներուն մասնակցող Ֆինլանտայի ազգային խումբը Բ. խմբակի առաջին հանգրուանի մրցումներուն նուազագոյն հաշիւով յաղթեց Ղաւիոյ։

Դանիոյ մայրաքաղաք Քոպենհագենի մէջ տեղի ունեցած այս մրցումին միակ կողմը նշանակուեցաւ 60-րդ վայրկեանին մինչ 74-րդ վայրկեանին Դանիոյ մէկ մարզիկը ի նպաստ իր կազմին փենալթի մը չկրցաւ կոլի վերածել։

Այս մրցումը 43-րդ վայրկեանին ընդհատուեցաւ եւ ապա շարունակուեցաւ 2 ժամ ետք, երբ Դանիոյ միջնապահ Քրիսթիան Էրիքսըն իր գիտակցութիւնը կորսնցնելով գետին ինկաւ։



Իտալական Ինթեր Միլանի 29 տարեկան ֆուբպոլիստը դաշտին վրայ 20 վայրկեան բուժումի ենթարկուելէ ետք փոխադրուեցաւ հիւանդանոց եւ ենթարկուեցաւ մանրամասն քննութիւններու, ապա յայտարարուեցաւ, որ անոր առողջութիւնը կայուն է։

Մնալով նոյն խմբակին մէջ՝ Պեճիքա 3-0 արդիւնքով յաղթեց Ռուսիոյ, Ս. Փեթերսպուրկի մէջ (Ռուսիա) տեղի ունեցած մրցումին։



Իտալական Ինթեր Միլանի յառաջապահ Ռոմեո Լուքաքու, որ նշանակեց իր կազմին երկու կոլերը (10-րդ եւ 88-րդ), զանոնք նուիրեց իր ակումբին խմբակիցին՝ Էրիքսընին։

Ինչ կը վերաբերի Կալէս-Չուիցերիա մրցումին, անիկա աւարտեցաւ 1-1 արդիւնքով։

Դ. խմբակին մէջ, Անգլիա «Ռեմպլի»-ի մարզադաշտին վրայ 1-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց աշխարհի փոխախոյեան Խրուաթիոյ դէմ։

Անգլիոյ եւ մրցումին միակ կողմը նշանակեց Մանչեսթըր Սիթիի յառաջապահ Ռաիմ Սթերլինկ (57-րդ)։



Գ. խմբակին մէջ, Աւստրիա 2-1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց Մակեդոնիոյ դէմ։

Վերջապէս, երէկուան վերջին մրցումին, Նետերլանտներ 3-2 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեցին Ուլթրանիոյ դէմ։

Նետերլանտներ իրենց յաղթանակի կողմը նշանակեցին մրցումին 85-րդ վայրկեանին։

ԱՅՍՕՐՈՒՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Այսօր՝ երկուշաբթի, յայտագիրին վրայ են երեք ճակատումներ։

Դ. խմբակին մէջ, ժամը 16:00-ին (Պէյրութի ժամանակացոյցով) Սկոտլանդ կը մրցի Չեխիոյ դէմ։

Ժամը 19:00-ին, Լեհաստան կը մրցի Սլովաքիոյ դէմ, իսկ ժամը 20:00-ին, բաւական հետաքրքրական մրցումի մը ընթացքին, Սպանիա կը մրցի Շուէտի դէմ (երկուքն ալ՝ Ե. խմբակ)։

«ՌՈՒՄԻԱՆ ԿԸ ԶԳՏԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳԵՐԻՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԻ ՓԱԿՄԱՆ» ԲՈԼՈՐԸ ԲՈԼՈՐԻ ԳԻՄԱՅ» ՄԿԶԲՈՒՆՔՈՎ»

Կ'ԸՍԷ ԴԵՍՊԱՆ ԶՈՓԻՐԵԽՆ

Ռուսական կողմը կը ձգտի հասնիլ պատերազմական գերիներու խնդիրի վերջնական փակման՝ «բոլորը բոլորի դիմաց», սկզբունքով: «Սփուռնիք Արմենիա»-ի հետ հարցազրույցի ընթացքին ըսած է Հայաստանի մէջ Ռուսիոյ դեսպան Սերկէյ Զոփիր-քին:



Անոր համաձայն, Արցախի վերաբերեալ եռակողմ յայտարարութեան ստորագրումէն ետք ռուսական կողմը, ներառեալ Ռուսիոյ բարձրագոյն ղեկավարութիւնն ու համապատասխան նախարարութիւնները՝ արտաքին գործոց եւ պաշտպանութեան նախարարութիւնները, առաջնային ուշադրութիւն դարձուցած են ու կը շարունակեն դարձնել այդ հարցին:

«Այդ հաղորդակցութիւններուն եւ հարցի լուծման գործին մէջ շատ մեծ դերակատարութիւն ունի խաղաղապահ զօրակազմը եւ անձամբ զօր. Ռուսթամ Մուրատովը: Ի հարկէ, իոյովոյթը մեր ուզածին պէս արագ չ'ընթանար: Ի սկզբանէ Ռուսիոյ մօտեցումն էր «բոլորը բոլորին դիմաց»: Ռուսական կողմը կը ձգտի հասնիլ պատերազմական գերիներու խնդիրի այդ բանաձեւով վերջնական փակման», ըսած է ռուս դիւանագետը:

Անոր տուեալներով՝ Մուրատովի անմիջական մասնակցութեամբ կողմերը փոխանակած են 82 գերիներ, որոնցմէ 66-ը Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներ են: Սակայն այդ ուղղութեամբ աշխատանքը չի դադորի:

Դիւանագետը այս ծիրին մէջ նշած է, որ 8 յունիսին հայ զինուոր մը մոլորած էր, եւ շնորհիւ գործնական քայլերու դիմած Մուրատովի, որ հաղորդակցութեան մէջ մտած էր ազրպէյճանական ու հայկական կողմերուն հետ, կարելի եղած է լուծել խնդիրը:

«Չինուորը արդէն յաջորդ օրը վերադարձած է հայկական կողմին: Ասիկա շօշափելի օրինակ է», եզրափակած է ան:

ՀՄԸՄ ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏ . . .

Շարունակուած 7-րդ էջէն

Իր արձանագրած այս յաղթանակին շնորհիւ, ՀՄԸՄ անկէ խլեց պարագլուխի դիրքը եւ դարձաւ նոր յառաջատարը՝ իր տրամադրութեան տակ ունեւալով 10 կէտ:

Կլոպը Եունիվերսիթի ունի 9 կէտ, մինչ Մուսուատ (3-րդ), որ 3-2 արդիւնքով պարտուեցաւ Մարժապայէն, այժմ ունի 7 կէտ:

ՀՄԸՄ-ի կոլերը նշանակեցին Աւագ Պալապանեան (15-րդ), Սերժ Մելիքեան (23-րդ), Զամալ Աիրաժ (26-րդ, 29-րդ եւ 35-րդ), Ժոզեֆ Նատեր (27-րդ) եւ Ժորժ Ֆարահ (36-րդ):

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԻ . . .

Շարունակուած 7-րդ էջէն

Նախավերջին հանգրուանի մրցումներուն, հայրենի **կրանտմասթըրը**, որ կը մրցէր սեւ քարերով, 62-րդ շարժումին պարտութեան մատնեց ռուսական Դոկտան-Տախիւլ Տեաքին:

Արոնեան, որ այսօր վերջին հանգրուանի մրցումներուն պիտի մրցի ազրպէյճանցի Թէյմուր Ռաճապովի դէմ, այժմ 4,5 կէտով կը գրաւէ դասաւորման երկրորդ դիրքը:

ԶԵՆ ՊԱՐՊՈՐԱ . . .

Շարունակուած 7-րդ էջէն

Ինչ կը վերաբերի տղոց աւարտականի մրցումին, անսկա աւարտեցաւ թիւ մէկ դասուած սերպ Նովաք Ճոքովիչի յաղթանակով, որ հակառակ երկու **սեր**



ուշացած ըլլալուն, յաղթեց յոյն Սթեֆանոս Ցիցիփասի՝ (5-րդ), 6-7, 2-6, 6-3, 6-2 եւ 6-4 արդիւնքով:

Այսպիսով, 34 տարեկան Ճոքովիչ կրան շէմի մրցաշարքերուն ընթացքին 19-րդ անգամ ըլլալով հանդիսացաւ տիտղոսակիր:

«ՌՈՒՄԻՈՅ ԵՒ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԾ ԵՆ ԱՄԷՆԷՆ ՑԱԾ ԿԷՏԻՆ»

Կ'ԸՍԷ ՓՈՒԹԻՆ

Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու յարաբերութիւնները վերջին տարիներուն հասած են ամենէն ցած կետին: Այս մասին յայտնած է Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինը ամերիկեան «Էւ.Պի.Սի.» պատկերասփուռի կայանին հետ հարցազրույցի ընթացքին: Ասիկա յուլիս 2018-էն ետք ամերիկեան լրատուամիջոցներուն հետ անոր առաջին հարցազրույցն է:

«Մեր երկկողմանի յարաբերութիւնները վերջին տարիներուն վատթարացած են հասած են ամենէն ցած մակարդակին», ըսած է Փութին:

«Ռուսիոյ նախագահին համաձայն, Միացեալ Նահանգներու ներկայ նախագահ Ծօ Պայտըն արմատապէս կը տարբերի իր նախորդէն՝ Տանըլտ Թրամփէն: Փութին նշած է, որ նախագահ Պայտընը ասպարէզային քաղաքական գործիչ է, որ իր ամբողջ գիտակցական կենսքը անցուցած է քաղաքականութեան մէջ:

«Ան բոլորովին այլ մարդ է, անոր մէջ կան թէ՛ առաւելութիւններ, թէ՛ ալ թերութիւններ, սակայն յոյս ունիմ, որ գործող նախագահին կողմէ ներքին մղումէ դրդուած քայլեր չ'են ըլլար», ասեցուցած է Ռուսիոյ նախագահը:

Ինչ կը վերաբերի Թրամփին՝ Փութին մինչեւ օրս կը կարծէ, թէ Միացեալ Նահանգներու Նախկին Նախագահը արտասովոր անձնաւորութիւն է, տալիզաւոր մարդ, այլապէս ան Միաց-



եալ Նահանգներու նախագահ չ'ը դառնար:

Խօսելով Պայտընի գալթակալից յայտարարութիւններուն մասին (ան Փութինը «մարդասպան» կոչած էր), Ռուսիոյ նախագահը ըսած է, որ Միացեալ Նահանգներու նախագահի այդ հարցազրույցը զինք չ'է զարմացուցած: Ան ասեցուցած է, որ պաշտօնավարման ընթացքին սովոր դարձած է բոլոր կողմերէն յարձակումներուն՝ տարբեր պատրուակներով, տարբեր պատճառներով, տարբեր տրամաւէտփի եւ դաժանութեան:

Նշենք, որ «Սի.Էն.Էն.» շաբաթ օր հաղորդեց, որ Ժընեւի մէջ 18 յունիսին նախատեսուած Պայտըն-Փութին հանդիպումին, յայտարարեց. «Կը նախատեսենք, որ անկեղծ եւ ուղղակի հանդիպում մը ըլլայ»:

«ՏԱԾԻԿԻՍՏԱՆՆ ՈՒ ԽԵՐԽԸԶԻՍՏԱՆԸ ԱՆՑԱԾ ԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ, ԱՏԻԿԱ ԼԱԻՕՐԻՆԱԿ Է ՅԵՏԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ»

Կ'ԸՍԷ ԼԱԻՐՈՎ

Տաճիկիստանն ու Խըրխըզիստանը սկսած են սահմանագծման աշխատանքներ կատարել, ասիկա լաւ օրինակ է ամբողջ յետխորհրդային շրջանին համար: «ՌԻԱ Նովոսթի» կը հաղորդէ, որ այս մասին յայտնած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով:

«Մենք երբէկ նոյնպէս խօսած ենք առճակատումէն համագործակցութեան անցնելու դրական օրինակին մասին, որ ցոյց կու տան Տաճիկիստանն ու Խըրխըզիստանը: Մենք շատ ուրախ ենք, որ վերջերս բռնկած տագնապի թեժ փուլը մեր ետին մնացած է, սակայն ամենէն զխաւորը այն է, որ երկիրները անցած են սահմանագատման եւ սահմանագծման աշխատանքներու», ընդգծած է Լաւրովը՝ տաճիկ գործընկերոջ հետ հանդիպումին:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարին համաձայն, ասիկա շատ լաւ օրինակ է ամբողջ յետխորհրդային շրջանին համար, ուր սահմանները վերջնականապէս եւ յուսալիօրէն չ'են ձեւաւորուած իրականապէս առումով:

Յայտնենք, որ Տաճիկիստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութիւնը վերջերս հաղորդած էր, որ Տաճիկիստանի եւ Խըրխըզիստանի արտաքին գործոց նախարարներ Սիրոժետտին Մուխիտին եւ Ռուսլան Զա-

գաբայեւ քննարկած են տաճկա-խըրխըզական սահմանի կացութիւնը:

Նշուած էր, որ հանդիպումը անցած է Սիւն չինական քաղաքին մէջ՝ արտաքին գործոց նախարարներու «Կեդրոնական Ասիա-Չինաստան» երկրորդ հանդիպման ծիրին մէջ:

Հանդիպման ընթացքին կողմերը քննարկած են պետութիւններու ղեկավարներուն կողմէ ձեռք բերուած համաձայնութիւններու, կողմերու կառավարական պատուիրակութիւններուն եւ աշխատանքային խումբերու արձանագրութիւններու շուտափոյն կատարման հարցերը, որոնք կը վերաբերին տաճկա-խըրխըզական սահմանի սահմանագատման ու սահմանագծման», կը նշուի հաղորդագրութեան մէջ:

Արտաքին գործոց նախարարութիւններու ղեկավարները նաեւ նշած են առեւտրական-տնտեսական, փոխադրամիջոցային, ուժանիւթային եւ այլ ոլորտներու մէջ երկիրներու միջեւ համագործակցութեան հետադարձ գալթագման կարեւորութիւնը:

«Ինթըրֆաքս» կը հաղորդէ, որ ապրիլի վերջաւորութեան երկու երկիրներու սահմանին վրայ տեղի ունեցած էր զինեալ բախում, որուն պատճառով երկու կողմերէն ալ արձանագրուած էին զոհեր եւ վիրաւորներ:

ՄԱՅՄՈՒՆԷ ՇԵՐԻՖ ԵՒ ՄԻԶԱԶԱՅԻՆ . . .

Շարունակուած 2-րդ էջէն

Իսկ դոկտ. Սամիր Ապու Ռումման յայտնեց Իսլամական բարեփոխական միջազգային խորհուրդի ծիրին մէջ Զուլթի պատրաստակամութիւնը՝ կարելի միջոցներով նպաստելու նաւահանգիստի պայթումի ցաւալի հետեւանքներու դարձանումին եւ այս պայմաններուն մէջ մարդկային տառապանքի մեղմացման ճիգերուն:

Այս առիթով նաեւ ներկաները մօտէն ծանօթացան ՄԱԿ-ի Մարդկային պաշարներու (ԵՈՒ. ԷՆ. Հապիթաթ) միաւորի զօրակցութեամբ Պուրճ Համուտի քաղաքապետութեան մէջ հաստատուած՝ արհեստագիտական շրջանային գրասենեակի գործունեութեան: Ապա կատարուեցաւ Լեհաստանի դեսպանատան կողմէ Պուրճ Համուտի քաղաքացիական պաշտպանութեան բաժանմունքին Նուիրուած ստուգիչ սարքերու քննութիւնը:

Աւարտին ներկաները շրջեցան Պուրճ Համու-

տի եւ յատկապէս Մարաշ փողոցին մէջ՝ մօտէն հետեւելով լեհական ու ճափոնական դեսպանատուներուն կողմէ ֆինանսաւորուած բարգաւաճման ծրագիրներու կիրարկման եւ ենթակառուցի վերանորոգման աշխատանքի արդիւնքներուն, որոնք հիմնականին մէջ կ'ընդգրկեն վերանորոգուող ուժանիւթով լուսաւորում, ինքզ փողոցներու վերականգնում եւ հորդեհներու դիմաւաւման ծրագիր:

Նմանապէս, ներկաները շրջեցան նաեւ Նապապի մէջ, ուր Իսլամական բարեփոխական միջազգային խորհուրդի (Զուլթ) ֆինանսաւորումով եւ գործակցաբար նշեալ ծրագիրին, կարելի եղած էր վերականգնել շրջանին մէջ վնասներ կրած հարիւր բնակարան:

Կ'ՈՒԶՈՒԻ

Ոսկերչատուն մը կարիքը ունի ոսկերիչի (սետեբեր) մը, նաեւ մոմի վրայ աշխատող օրիորդի մը: Դիմել՝ հեռ. 76-464763:

ԹԱԼԵՊԱՆՆԵՐԸ ԿԸ ՍՊԱՌՆԱՆ ԹՈՒՐԵՈՅ

«ԱՖԳԱՆԻՍՏԱՆ ՄՆԱՅՈՂ ՈՐԵՒԷ ՊԵՏՈՒԹԻՒՆ ԲՈՆԱԳՐԱՒՈՂ ՊԻՏԻ ՆԿԱՏԵՆՔ»



Թալեպան շարժումը շաբաթ օր յայտարարեց. «Աֆղանիստան մնացող որեւէ պետութիւն բռնագրաւող պիտի նկատենք»:

Մինչ այդ, «Ռոյթըրզ» հաղորդեց, որ Թալեպան շարժումը մերժած է այլ օտարերկրեայ ուժերու հեռանալէն ետք միջազգային օդակայանը պաշտպանելու եւ շահագործելու համար Զապուլի մէջ ուժեր պահելու թուրքիոյ առաջարկը: Տոհայի մէջ Թալեպան շարժումի բանքեր Սուհաիլ Շահին յայտնած է, որ թուրքերը ես պէտք է հեռանան:

«Թուրքիան վերջին 20 տարիներուն ՕԹԱՆ-ի ուժերու մաս կը կազմէ, ուստի անոնք պէտք է հեռանան Աֆղանիստանէ՝ հիմնուելով այն համաձայնագիրին վրայ, որ մենք 29 փետրուար 2020-ին ստորագրած ենք Միացեալ Նահանգներու հետ», նշած է ան:

«Ինչ կը վերաբերի մնացեալին՝ Թուրքիան իսլամական մեծ երկիր է: Աֆղանիստանը անոր հետ պատմական կապեր ունի: Մենք յոյս ունինք անոնց հետ սերտ եւ լաւ յարաբերութիւններու հաստատման, երբ ապագային երկրին մէջ ստեղծուի նոր իսլամական կառավարութիւն», ասեցուցած է Շահին:

«Ահվալ» օրաթերթը ուրբաթ օր հաղորդած էր, որ Միացեալ Նահանգներ կը սպասեն Աֆղանիստանէն ՕԹԱՆ-ի ուժերուն հեռացումէն ետք Զապուլի «Համիտ Զարգայ» միջազգային օդակայանը պաշտպանելու վերաբերեալ Թուրքիոյ որոշումին:

Փենթագոնի բանքեր ճոն Զըրպի յայտնած է, որ Թուրքիոյ ղեկավարներուն հետ շարունակական քննարկումներ տեղի կ'ունենան Զապուլի օդակայանին վերաբերեալ, եւ նշած, որ այդ որոշումը պէտք է անձամբ տայ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան: Ան նշած է, որ Էրտողան ի՛նչ որոշում ալ տայ, իրենք զայն պիտի յարգեն:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ «ՄԻՋԵՐԿԱՐԱԿԱՆԵԱՆ ԵՕԹՆԵԱԿ»-Ը ՄԻԱՅԵԱԼ ՀՈՉԱԿԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐԱԾ Է



Եւրոպական Միութեան «Միջերկրականեան եօթնեակ»-ը (Կիպրոս, Ֆրանսա, Յունաստան, Իտալիա, Մալթա, Փորթուգալ եւ Սպանիա) Աթէնքի մէջ ստորագրած են միացեալ հռչակագիր՝ վերահաստատելու «աւելի ժողով եւ աւելի միասնական Եւրոպայի տեսլականին հիման վրայ սերտ համագործակցութիւնը շարունակելու պարտաւորութիւնը: Այս մասին կը հաղորդէ «Կորը Սիթի Թայմզ»-ը:

Փաստաթուղթին մէջ անդամ պետութիւնները կոչ ուղղած են՝ շարունակելու Եւրոպական Միութեան ներգրաւուածութիւնը միջերկրականեան շրջանին մէջ, որ Եւրոպական Միութեան բարգաւաճման, անվտանգութեան եւ կայունութեան համար ռազմավարական նշանակութիւն ունի:

«Շրջանի բոլոր երկիրներուն կոչ կ'ուղղենք՝ յարգելու Եւրոպական Միութեան անդամ բոլոր պետութիւններու գերիշխանութիւնն ու գերիշխան իրաւունքները, ինչպէս նաեւ միջազգային օրէնքը, ներառեալ ծովու մասին օրէնքը», նշած են արտաքին գործոց նախարարները եւ Թուրքիոյ կոչ ուղղած՝ ընդունելու ծովային սահմաններու սահմանագատման շուրջ երկխօսութեան սկսելու Կիպրոսի առաջարկը: Փաստաթուղթին մէջ հաստատուած է նաեւ Կիպրոսի հարցին մէջ ՄԱԿ-ի համապատասխան բանաձեւերուն աջակցութիւնը:

Հանդիպումը խումբի վեհաժողովի համար նախապատրաստական քայլ եղած է: Եւրոպական Միութեան «Միջերկրականեան եօթնեակ»-ի վեհաժողովը տեղի պիտի ունենայ սեպտեմբեր 2021-ին՝ Աթէնքի մէջ: